# Կ Ա Մ Ո Ց Ի Տ Ր Ջ Ա Ն

# ՆՈՐԱԴՈՒԶ (ՀՆՈՒՄ՝ ՆՈՐԱՏՈՒՍ)

Հայաստանի հնագույն բնակավայրերից է և մեկը Գեղարքունի գավառի այն սակավաթիվ գյուղերից, որի հին անունը պահպանվել է մինչև այժմ։ Հնում, մինչև XIX դարի սկիզբը եղել է Մժակ գավառի (Կամոյի շրջան) վարչական կենտրոնը, Զաքարյանների ժամանակ այստեղ է նստել նրանց կառավարիչը, որն արձանագրությունների մեջ կոչված է դեմեթար, մեփորել կամ առաջնորդ։ XVI դարում Գեղարքունյաց մելիքական չորս տոհմերից մեկը, Ազարյանները Մելիք Բարիքի օրոք, իրենց նստոցը մոտակա Գանձակ (Քյոսամահմատ) գյուղից տեղափոխում են Նորադուզ։

Գյուղի մեջ և նրա շրջակայքում կան մեծ թվով միջնադարյան հուշարձաններ և արձանագրություններ.

Ա. ս. Աստվածածին եկեղեցի. գտնվում է գյուղի կենտրոնում, շինված է IX դարի վերջին՝ Գեղարքունիի Սահակ իշխանի կողմից։ Եկեղեցին գմբեթավոր սրահ է եղել, շինված համակ սրբատաշ և մեծ քարերով. վերջին դարերում փլվել է, կամ ինչպես ավանդաբար ասվում է, գմբեթն ու ծածկը ավերվել են լեզգիների կողմից։ Ալաշկերտից ներգաղթողներն այն ծածկել են գերաններով։ Եկեղեցին ունեցել է պարսպափակ բակ, ուր այժմ էլ կան բազմաթիվ խաչքարեր և տապանաքարեր՝ մեծ մասն արդեն տեղից խախտված։ Ամենահին արձանագրությունն այստեղ մի խաչքարի վրա էր (996), որը տեղափոխել ենք Երևան և պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում։

Բ. ս. Գրիգոր կամ Դափուց վանք. գտնվում է գյուղի հարավային եզրին, այժմ կենտրոնագմբեթ փոքր եկեղեցի է, որին արտաքուստ, հյուսիսում և հարավում, ավելացվել են երկու խորաններ։ Գրականության մեջ համարվել է XIII դարի կառույց, բայց արձանագրությունների և շինարարական ձևերի մեր մանրամասն քննությունը պարզում է, որ շենքը կառուցված է եղել X դարից առաջ. այն եղել է թաղածածկ և նրա արևմտյան պատին պահպանվել է մոտ 1000 թ. գրված Հերակլի արձանագրությունը։ Այդ ժամանակներում էլ վերցնելով ծածկը և ներքուստ, պատերին կից մույթեր ավելացնելով, շենքը դարձրել են գմբեթավոր՝ Խաչատուր քարգործ ճարտարապետի ձեռքով։ Դրանից ուշ արձանագրությունների մեջ հանդիպող «շինեցի» տերմինը պետք է հասկանալ «նորոգեցի» իմաստով[1]։ Եկեղեցին ունի պարսպափակ բակ, որի արևելյան պատի տակ կանգնած են մի քանի խաչքարեր։ Ըստ Սիմոն կաթողիկոսի կոչվել է Դափուց վանք և եղել է կուսանոց[2]։

Գ. Գյուղամիջում ցրված առանձնակի խաչքարեր. դրանք շատ են, բայց ոչ բոլորն ունեն արձանագրություններ. հնագույնը վերաբերում է կամուրջի շինությանը և թվագրված է 1211 թ., իսկ Տոնոյանի տան դիմաց, ս. Աստվածածին եկեղեցու դեպի արևելք, դրանք մի խումբ են կազմում, ուր կան նաև տապանաքարեր, ըստ երևույթին Զուրալեցոնց ընտանիքի տոհմական գերեզմանոցն է եղել այստեղ. դրանցից մեկն է միայն թվագրված՝ 1553 թ.։

---

1 Ավելի մանրամասն տե՛ս մեր «Միջնադարյան ճարտարապետներ և քարգործ վարպետներ» աշխատությունը, Երևան, 1963, էջ 38—41։

2 Զամբռ, 52։

Դ. Մեծ գերեզմանատուն. *գտնվում է գյուղի հարավային եզրին՝ ընդարձակ բարձրավան-
դակի վրա. այժմ արդեն իրար միացած երկու մասերից է բաղկացած, հին և նոր. հինը սկսվել
է բարձրավանդակի արևմտյան եզրից, որ թաղումներն սկզբում դասավորված են կանոնավոր
շարքերով՝ հյուսիսից-հարավ. այդ մասում կան նաև սրբատաշ քարերով շինված երկու մա-
տուռներ, մեկը շինված 1211 թ., մյուսը՝ 1714 թ.: Ամենահին խաչքարն այս մասում թվագրված
է 1225 թ., սակայն գերեզմանատան մեջ, և հատկապես ս. մատուռի շուրջը, ընկած և կիսա-
կանգուն վիճակում կան կլոր և քառակուսի ընկերով կոթողներ ու նրանց գլխի անջատ խոյակ-
ներ, որոնք IX դ. և ավելի վաղ ժամանակների են վերաբերում: Գերեզմանատան նոր մասը
շարունակվել է դեպի արևելք, որ այժմ էլ միակ թաղման վայրն է գյուղի համար: Այստեղ
կան շատ հին խաչքարեր և նրանց բեկորները, որոնք բերված են հին մասից և օգտագործվել
են որպես տապանաքարեր:*

Ե. Մատուռ, *գտնվում է գյուղից հյուսիս-արևելք, մոտ երկու կիլոմետր հեռու, մի բարձ-
րության վրա. շինված է եղել սրբատաշ քարերով, բայց հետագա նորոգումների ժամանակ հին
մասից մնացել են պատերի ստորին մասերը միայն. արևմտյան կողմում բազմաթիվ խաչ-
քարեր իրար միացնելով՝ պատի տեսք են տվել և փոքրիկ բակ գոյացրել. շուրջը կան խուցերի
ավերակներ. թվական ունեցող ամենահին արձանագրությունը վերաբերում է 1560 թվականին,
բայց շենքի հնագույն մասը XIII դարից ավելի նոր լինել չի կարող:*

*Այս գյուղի սահմաններից մեր հավաքածուի մեջ տեղ են գտել 188 արձանագրություն,
որոնցից նախկինում հրատարակված են եղել միայն 17-ը:*

*Նորադուզի սահմանի խաչքարերի մեջ կան մեծարժեք գործեր, որոնք կրում են նաև
կազմողների անունները. դրանցից նշանավորներն են Մելիքսեթն ու Քիրամը:*

*1. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցու հարավային պատին, արտաքուստ, պատուհանի տակ, 8 տող.*



Թվին ։Չէ։ (1258). յիշխանութեան աստուածափԱՌ ՏԷՐԱՆՑ ՄԵՐՈՑ| ԽՈՇԱՔԻՆ ԵՒ ԱԹԱԲԱԿ ՍԱԴՈՒ-ՆԻՆ| ՄԵՔ ՆՈՐԱՏԻԱՑ ՄԻԾ ԵՒ ՓՈՔՐ ԱՄԷՆ,| ՄԵՐ ՍՐՏԻ ԿԱՄԱՒՔ ՁԷՁԻՆ ՁԱՐ ԵՒ ՁՁ͜ՈՐԻՒՆ| ԵՒ ՎԼՑԿԻ ՎԵՐ ԿԱԼԱՔ։ ՈՎ ԽԱՓԱ|ՆԷ։ ՑԺԸ։ ՀԱՑՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈ-Վ|ԱԾ Է։

Ծանոթ. *Առաջին տողի փոքրատառ շարված մասը այժմ տեղում չկա. պատուհանը մեծացնելու նպատակով քարերի այդ մասերը կտրված-հանված են։ Սմբատյանցի ժամանակ լրիվ է եղել։ Հավանաբար թվականի մեջ տասնավորը բաց է թողնված։*

*Արձանագրության բովանդակությունն անսովոր է. սովորաբար երկրի տերը կամ նրա պաշտոնյաներն են հարկերը զեղչում, իսկ այստեղ՝ գյուղացիները։*

*Հրատարակիչների մոտ միայն առաջին երեք տողերն են բերված։*

*Հրատ. Սմբատյանց, 482։ Լալայան, XVIII, 117։*

**Լուսանկ. 1**

*2. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցու հարավային պատին, արտաքուստ, 7 տող.*



ՑԱՆՈՒՆ ԱՑ. ԱՅՑՍ ԻՄ ԳԻՐ Ե ՆՈՐԱՏԻՈՑ| . . . ՀՆԱՑԵՍԻՆԱՑ ԵՍ ԴԵՄԵ-ԹԱՐՍ . . . . . . .| ԱՑԾԱՅՍ Ի ՎԵՐ ԿԱԼԱՔ ԱԻԱԳԻՆ ԱՐԵԻ|ԻՆ ՀԱՄԱՐ. ։ ՈՁ։ (680) ԳՁՐԻՆ ՏԱՆ, ՀԱԿ ՈՁ, ։ՁԱ։ (81) ՓՈ|ՂԻՆ։Ա։ԵՁՆ, ՄԵՍԱԼՈՒՄ ԳՁԻՐՆ ԼԾԵ։Ա։ԵՁՆ.| ՄԵՍԱԼՈՒՄ ։Ծ։ (50) ՓՈՂՆ. ՎԿԱ. ԳՐԻՍ ԱԾ, ԱԲՍԱՆ| ԽՈՐԴՆ, ՈՐ ԽԱՓԱՆԷ ՆԱՑ. ԱՑ. ԽՓԵԼ՝ ԵՍ ԹՈՒՆԻՍ . . .

*Ծանոթ. Այս կարևոր արձանագրությունն այժմ կորած է. մեր ձեռքի տակ է 1926 թ. կատարած բավականին պարզ մի լուսանկար, սակայն որոշ մասեր մնում են անհասկանալի՝ կիսագրագետ գրչի և անծանոթ տերմինների պատճառով:*

*Հրատարակիչների մոտ խիստ թերի և աղավաղված բովանդակությամբ է մեջ բերված:*

*Հրատ. Սմբատյանց, 483: Լալայան, XVIII, 117.*

**Լուսանկ. 2**

**3. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *հարավային պատին, լուսամուտից արևմուտք, 2 տող.*



ԵՍ ԱՀԱՐՈՆ ԾԱՌԱ| ԱՑ:

*Ծանոթ. Գ. գա. է ա. գծով ստոր երկաթի ծայրով:*

**Լուսանկ. 3**

**4. ԽԱՉՔԱՐ,** *մեծ ու գեղեցիկ, մեկը հնագույն խաչքարերից, վերևի անկյունը կոտրված, կանգնած էր արևմտյան բակում՝ եկեղեցու պատին հենած. այժմ տեղափոխված է Երևանի պատմական Թանգարան. տակի գնդի երկու կողմերում 5 տող.*



Ի Թ[Ի]ԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՌ|
Ց: ՆԽԵ: (996) Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹՆԱ|
Ն ԳԱԳԿԱ ԵՍ ԽԱՐԻԲ ԿԱՆԳՆ|
ԵՑԻ ՍՈՒՐԲ ՔՐԻՍՏԱՓՈՐՍ|
ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ՝ ԶԻՍ ՅԻՇԵՑԷՔ:

*Հրատ. Սմբատյանց, 482: Լալայան, XVIII, 117 (երկուսի մոտ էլ թերի և աղավաղված է):*

**Լուսանկ. 4**

**5. ԽԱՉՔԱՐԵՐ,** *երեք հատ, կանգնած են եկեղեցու արևմտյան պատի տակ, նրա հյուսիսային անկյունում.*

*Ա. միջնեղին, խրված գետնի մեջ, ջարդոտված քիվին և տակը 2 տող.*



ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ Պ[Ե]Տ[ՐՈՍ] ԱԲԵՂԱՑԻՆ.
ԹՎ.: ՋԸ: (1459):

*6. Բ. Նախորդին կից հյուսիսից, խրված գետնի մեջ և թեքված առաջ. ճակատին 2 տող.*



ԵՍ ԷՍՏԱՐՍ Կ[Ա]Ն[Կ]ՆԵ[Ց]Ի ՄԲ. ԽԱՉՍ ՀԱՒՐ ԻՄ| ԳԻՒԱՏՈՒՐԻՆ, ՔԱՍ[Պ]ԱՐԻՆ, ՄԱՐՔ[Ա]ՐՏԻՆ:

**Լուսանկ. 5**

*7. Գ. Նախորդներին կից հարավից, քիվին և տակը 2 տող.*



ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ՄԱՐՏԻՐՈՍ ՔԱՀԱՆԱԻՆ . . . . | ՅՈՀԱՆԷՍ Կ[Ա]ԶՄ[ՈՂ]:

*Ծանոթ. Այս երեք խաչքարերը նույն գերդաստանին են վերաբերում և ժամանակակից են նույն ՅՈՀԱՆԷՍԻ կազմածին:*

**8. ԽԱՉՔԱՐԵՐ**, *երկու հատ, մեծ և գեղաքանդակ, իրար կից, կանգնած են եկեղեցու հարավային մուտքի դիմաց.*

*Ա. քիվին, խորանի վերին մասերում՝ ներսից և դրսից.*



ՍԲ Խ[Ա]ՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԵՂԻՍԱՑԲԵԴԻՆ.
ՄԵԼՔՍԷԹ ԿԱԶՄՈՂ. ԹՎ.:ՌԴ: (1555):

Լուսանկ. 6

**9. Բ. ՃԱԿԱՏԻՆ ԵՎ ԽՈՐԱՆԻ ՇՈՒՐՋԸ**



ԿԱՄԱՒՆ ԱՑ. ԵՍ Մ[ԵԼ]ԻՔ ԲԱՐԵՔՍ ԿԱՆԿՆԵՑ|Ի ՉԽԱՉՍ ՎԱՍՆ [ՓՐ]ԿՈՒԹԵ ՀՈԴՒՈՑ ԻՄՈՑ: ՄԵԼ[Ի]ՔՍԷԹ Կ[Ա]ԶՄՈՂ: ԲԱՐԵՔԻՆ Է Խ[Ա]ՉՍ:



*Թիկունքին*

[ԿԱՄԱՒՆ ԱՑ ԵՍ] ՄԵԼԻՔ|
[ԲԱՐԵՔՍ, ԵՂ]ԲԱՅՐ ԻՄ|
ԶՍ[Տ]ԵՓԱՆՈՍ ՔԱՀԱՆԷՆ;|
ՈՐԴԻՆ ԻՄ ԴՈՒՆԿԶԱՑ ԲԷԿՆ,|
ՀԱՐՆ ԻՄ ԳՈՒՆՏՈՒՋ ԱՂԷՆ,|
ԵԿԻՆՔ ԳԱՆՁԱԿԱՑ, ՇԻՆԵՑ-|
ԻՆՔ ԿԱՐՄՈՒ[Ն]ՃՍ, ՇԻՆԵՑԻՆՔ|
ՇՐՋԱՑՊԱՏՍ, ԿԱՆԿՆԵՑԻ|
ԶԽԱՉ[Ս]ԵՐՍ. ՈՐՔ ՑԵՐԿԻՐ|
ՊԱԳԷՔ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ:|

Ծանոթ. *Խաչքարի վերին մասն այժմ կոտրված-ընկած է տեղում և դրա հետևանքով Թիկունքի առաջին և մասամբ երկրորդ տողերը ջարդոտված են։*

*Ութերորդ տողում ՇՐՋԱՑՊԱՏ ներկա դեպքում նշանակում է եկեղեցու բակի շրջապարիսպը:*

*Նախորդի հետ շինված է միաժամանակ և կաղմող Մելիքսեթի ձեռքով, հետևաբար՝ 1555 թ.։*

*Հրատ. Սմբատյանց, 484։ Լալայան, XVIII։*

Լուսանկ. 7

**10. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *տափակ, մեծ, 3 մետր երկարությամբ, հարավային կողին երախները բացած և դեմ-դեմի վիշապներ, երեսին գավազան. գտնվում է նախորդ խաչքարերի դիմաց, վրան՝*

Ես Մելիք Ոսկէս տապանս շինեցի հօր իմում մելիք Պար(էքին):

Ծանոթ. *Արձանագրությունն այժմ խիստ մաշվել է և չի վերծանվում. առնում ենք Լալայանից։*

*Ժամանակով մոտ է նախորդներին։*

*Հրատ. Լալայան, XVIII, 117։*

11. *ԽԱՉՔԱՐ, մեծ, գեղաքանդակ. քիվին ուռուցիկ 1 տող.*

ՅԲԽԱՉՍԲԱՐԽ ԽԱՆՈՒԴՏՈՉԻ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱ(ՒՍ) ԿՈՒՆՏՈՒԶԻ(Ն):

Ծանոթ. *Մեր հուշատետրում խաչքարի տեղադրությունը չի նշանակված. այն պետք է այստեղ, եկեղեցու բակում, կամ գերեզմանատանը՝ Մելիք Բարեքենց մասում լինի:*

Լուսանկ. 8

12. *ԽԱՉՔԱՐ, փոքր, ընկած է բակի արևմտյան մասում՝ ջարդոտված.*

... ՅԲ ԽՆԲՑՐԽ<br>
ԱՒ<br>
ԻՆ<br>
Ռ Դ

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐ(Ե)Խ(Ա)Ւ(Ս) ԱԻԻՆ. (ԹՎ.) :ՌԴ: (1555):

Ծանոթ. *Անձնանունը կարող է ԱՒԵՏԻՔ և ուրիշ ձևով վերծանվել.*

13. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, օրորոցաձև, բակի հարավային մասում, երեսին 2 տող.*

ՍԲԽՉՍԲԱՐԽԱՒՍԱԿՈԲՃԱ<br>
ՆԻՆ ԹՎՌԻԹ:

ՍԲ. Խ(Ա)Չ(Ս) ԲԱՐԵԽԱԻՍ ԱԿՈԲՃԱ|ՆԻՆ.<br>
ԹՎ. :ՌԻԹ: (1580):

14. *ԽԱՉՔԱՐ, հենած է եկեղեցուն պատից հարավ-արևմտյան կողմում շինված հասարակ դավթի մուտքի մոտ. քիվին 2 տող.*

ՍԲԽՉՍԲՐԷԽԱՒՍՏՐԱՌ<br>
ԱՔԵԼԻՆ:: ԹՎՌԼԱ

ՍԲ. Խ(Ա)Չ(Ս) Բ(Ա)ՐԷԽԱԻՍ ՏՐ. ԱՌ|ԱՔԵԼԻՆ.<br>
ԹՎ. :ՌԼԱ:(1586):

15. *ԽԱՉՔԱՐ, մեծ, դրված է նույն ղավթի մուտքից վեր, պատի մեջ, ճակատին 2 տող.*

ՍԲԽՍՉՍԲԽԻԱՄՁԻՐԶՈՐԻ Է<br>
+<br>
ԵՒԿԱԶՄՈՂՄԵԼԻՍԹ:ԹՎՌԽԴ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱ(Ւ)Ս ԳԻՐԳՈՐԻՆ<br>
ԵՒ ԿԱԶՄՈՂ ՄԵԼ(Ի)Ք(ՍԵԴ)Թ(Ի)Ն.<br>
ԹՎ.: ՌԽԴ: (1595):

Լուսանկ. 9

16. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է պատվանդանի վրա, որի կողքին կա մեկ փոս և այժմ դատարկ. գտնվում է բակի հարավային մասում. քիվին և տակը 3 տող.*

ՍԽԱՉՍԱՐԷԽԱԻԱԲՐԻՀԱՄԻ<br>
+<br>
ԹՎՌԽԴ<br>
ԿՈՂԿԻՑԽԱՆԱՂԻՆ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻ(Ս) ԱԲՐԻՀԱՄԻՆ<br>
ԿՈՂ(Ա)ԿԻՑ ԽԱՆԱՂԻՆ.<br>
ԹՎ.: ՌԽԴ: (1595):

Լուսանկ. 10

*17.* ***ԽԱՉՔԱՐ****, փոքր, ագուցված է գավթի արևելյան պատի մեջ, արտաքուստ, քիվին և շրջանակներին 2 տող.*

---Ւ ԱՀՄԱՐԷԽԱՆՈԲԼ ՈՒ·



ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽ[ԱՒ]Ս ԱԿՈԲ[Ի]Ն[Ի] · ·ԲԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ. ԹՎ. ՌԾԵ: (1606):

Լուսանկ. 11

*18.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐԻ*** *մաս. գտնվում է բակի հյուսիսային մասում.*

ԱՅՍ Է ՀԱ-
ԳԻՍՄՇԱՀ
ԶԱԴՆ Ա··
ՔԱՍԻՆ
ՄԷԼԻՔ
ԲԼԲՈՒԼ·
ԹՌՃԺԵ

ԱՅՍ Է ՀԱ[Ն]Գ[Ի]ՍՏ ՇԱՀ[Ի]ԶԱԴԻՆ, ԱՄ[Ի]ՐՔԱՍԻՆ ՄԷԼԻՔ Բ[Լ]ԲՈՒԼ[Ի]Ն[Ի], ԹՎ. ՌՃԺԵ: (1666):

*19.* ***ԽԱՉՔԱՐ****, խրված է գետնի մեջ, բակի հյուսիսային մասում, քիվին 1 տող.*

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽՍ ՈՍՏԱՆ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽ[Օ]Ս ՈՍՏԱՆ[Ի]Ն[Ի]:

Ծանոթ. *Հավանաբար* XVII *դար:*

*20.* ***ԽԱՉՔԱՐ****, բակի հյուսիսային մասում. քիվին 2 տող.*

ՍԲ ԽՉՍԲՐԽՍ
ՏԷՐ ՈՎԱՆԷՍԻՆ

ՍԲ. Խ[Ա]ՉՍ Բ[Ա]Ր[Ե]Խ[ԱՒ]Ս ՏԷՐ ՈՎԱՆԷՍԻՆ:

Ծանոթ. XVII *դար:*

*21.* ***ԽԱՉՔԱՐ****, փոքր, բակի հարավային մասում. քիվին 1 տող.*

ԽՈՂԱԿԻՆ ԱՆԹԱՌԱՆ

ՀՈՂԱԿԻՆ, ԱՆԹԱՌԱՆ[Ի]Ն:

Ծանոթ. XVII *դար:*

*22.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ****, կենցաղային տեսարանով, բակի հարավային մասում, կիսեղծ արձանագրությունով, 3 տող.*

ՍԲ ԽՉՍԲԱՐԷԽՍԱԼԱՀ· ·ԻՆ
ՈՐԶԻԹՉԻԶ
ԱՐԱՅԻՇԷՔ

ՍԲ. Խ[Ա]ՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ
ԱԼԱՀ[Ա]ԴԱՍՏԻՆ . . .
ՈՐ ԶԻ Թ. ՉԻԶ: (1277)
. . . ՅԻՇԷՔ:

*23. ԽԱՉՔԱՐ, փոքր, ընկած է բակի արևմտյան մասում, ճակատին 2 տող.*



ՍԲ. ԽՕՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՍԱԱԿԻՆ:

Ծանոթ. XVII դար.

*24. ԽԱՉՔԱՐ, կանգնած է բակի արևմտյան մասում. քիվին 1 տող.*



ՍԲ. ԽԱ|Չ|Ս ԲԱՐ|Է|Խ|ԱՒ|Ս ՄԽԻԹ|ԱՐԻՆ|:

Ծանոթ. XVII դար.

*25. ԽԱՉՔԱՐ, բակի հարավային մասում. քիվին 1 տող.*



ԽԱՉ|Ս| ՍԻՄՐՇԱՏԻՆ:

*26. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, օրորոցաձև, արևելյան ճակատին 4 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ Շ|ԱՀՍԱԼԹԱՆ|ԻՆ:

*27. ԽԱՉՔԱՐ, հասարակ, գտնվում է Մելիք Բարիքի խաչքարից ոչ հեռու.*



ԵՍ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ[ԿԱՆ]Ս ԷՐԷՑ ԿԱ|ՆԿՆԵՑԻ| ՍԲ ԽԱՉՍ Հ|ՍԿՍ| Փ|ՐԿՈՒԹԵ|:

Ծանոթ. *Գծագրի վերջին երեք գրերը գրված են հարավային կողին։*

Լալաեան. 12

*28. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը գտնվելիս է եղել եկեղեցու բակում և այժմ չկա.*

Ես Պօղոս կանգնեցի սբ. խաչս իմ որդի Քասպարին. Թվ. :ՌՃԶ: (1657):

*Հրատ. Սմբատյանց. 483։*

Ս. ԳՐԻԳՈՐ (ԴԱՓՈՒՑ ՎԱՆՔ)

*29. ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան պատի հարավային մասում, արտաքուստ, անկանոն տողերով և գրչությամբ, բայց հնաձև 4 տող.*



Շ[Ն]ՈՐՀԻՎ. ԱՑ. ԿԱՄ ԵՂԵՒ ԻՆՁ ՀԵՐԱԿՂԻ ՀԱ|ՎՆՈՒՆՍ ԵՒ ԵՏՍՒ ՁՋՈՐՈՂԱՆՍ :Բ: ԱՐՏ Ի ՍՈՒ|ՐԲ ԳԻՐԳՈՐ. ՀՐԱՄԱՆԱՒ ԳԱ|Գ|ԿԱ ՇԱՀ[Ն]|ՇԱՀԻ ԵՒ ԳՆԵՑԻ ՋՐ . . . .

Մանոթ. Արձանագրությունը թողել են անավարտ։

Համարում ենք X դարի վերջի գործ. բացի այստեղ հիշատակված Գագիկ Շահնշահի հիշատակումից, դրա համար հիմք ունենք նաև Նոր Բայազետի № արձանագրությունը՝ 1000 թ., նույն Հերակլի անունից գրված (Հայրակլ ձևով)։

Լուսանկ. 13

**30. ԽԱՉՔԱՐ**, *փոքր, ագուցված է եկեղեցու բեմի կորության հարավային մասում, պատուհանի մոտ, ներքուստ, խաչի շուրջը.*




ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱՐԳԵՒԱՐԴ ՅԻՇԱ։

Մանոթ. *Խաչքարի տեղադրման, խաչի և գրերի հնաձևության և շենքի բաղկերի ձևից գմբեթավորի վերակառուցելու ժամանակի հիման վրա համարում ենք X դարի վերջի կամ XI-ի սկզբի գործ և այդ վերակառուցման ճարտարապետի հիշատակագրություն։*

**31. ԵԿԵՂԵՑՈՒ** *հարավային պատի վերին մասում, քիվի տակ, արտաքուստ, 4 տող.*

ԻԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ·ՐԱ·······ԱԼՄԵՐՈՒԹԵՒՎԱՆԷԻԵՒՇԱՀՆՇԱՀԻԻՀԱՅՐԱՊՏՈՒԹԵ
ՏՆՎԹԱՆԻՍԻԱԹՈՌ--ԱԼՄԵԾԴԵՂԻՍ
ԵՍՏՐՈՒԳՎԱՐԴԱՊԵՏ·········ՁԱՒԵՐԼԵԿԵՂԵՑԻՍՎԱՆԱՑՍՆՈՐԱՏՎԱՑԻՀԱԼԱԼ
ԸՆՉԻՑԵՒԻՍՏԱՑՎԱԾՈ--ԻՄՈՑՍԱԿԱՒ
ԵՒՀԱՍՏԱՏԵՑԻՀՈԳՈՅԻՄՈՅԱՆՁԻՆՋ···ԵՒԿԱՐԳԵՑԻՆՁԵՂԲԱՐՑՍՀԱՆԴԵՐՁԻՏԱՐԻՆԷՊԱՏԱՐԱԳ
ՉՅԱՐՈՒԹԵ ՇԱԲ-ԱԹՆ ՈՐԱՌՆԵՆ
ԱՒՐՀՆԻՆ···ԽԱՓԱ···ԱՄԱՆ···ՍԻՆՍԱՌՆՈՒ····ԿԱՏԱՐԻՉՔՀՐԱՄԱՆԱՑՄԵՐՈՑ
ԱՒՐՀՆԵՍՑԻՆԻՏԷԱՅՆ

Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՎՐԱ[Ց] ԹԱՄԱՐԻ.։ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ՏԷՐՈՒԹ[ԵԱՆ] ԻՎԱՆԷԻ ԵՒ ՇԱՀՆՇԱՀԻ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹ[ԵԱՆ] Տ[Է]Ն. ՎՐԹԱՆԻՍԻ ԱԹՈՌԱԿԱԼ ՄԵԾ ԳԵՂԻՍ ԵՍ ՏՐՈՒԳ ՎԱՐԴԱՊԵՏ . . . [ՇԻՆԵՑԻ] ՋԱՒԵՐԼ[ԵԱ]Լ ԵԿԵՂԵՑԻՍ ՎԱՆԱՑՍ ՆՈՐԱՏՎԱՑ Ի ՀԱԼԱԼ ԸՆՉԻՑ ԵՒ Ի ՍՏԱՑՎԱԾՈ[Յ] ԻՄՈՑ ՍԱԿԱՒ.| ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ ԱՆՁԻՆՋ . . . ԵՒ ԿԱՐԳԵՑԻ ԻՆՁ, ԵՂԲԱՐՑՍ ՀԱՆԴԵՐՁ, Ի ՏԱՐԻՆ ։Է։ ՊԱՏԱՐԱԳ ՉՅԱՐՈՒԹ[ԵԱ]Ն ՇԱԲԱԹՆ։ ՈՐ ԱՌՆԵՆ| ԱՒՐՀՆԻՆ [ՑԱՑ]. ԽԱՓԱ[Ն]ՈՂՔՆ . . . ԱՄԱՆ . . . ՍԻՆ ԱՌՆՈՒ . . . . ԿԱՏԱՐԻՉՔ ՀՐԱՄԱՆԱՑ ՄԵՐՈՑ ԱՒՐՀՆԵՍՑԻՆ Ի ՏԷ. ԱՅ. ԱՄԷՆ։

Մանոթ. *Գրված պետք է լինի XIII դարի սկզբներին, երբ Իվանեն դեռ կենդանի էր, և Շահնշահը՝ հասուն գործիչ։*

*Հրատ. Սմբատյանց, 485։ Լալայան, XVIII, 119, երկուսն էլ մեջից և վերջից թերի։*

32. ԵԿԵՂԵՑՈՒ *արևմտյան պատի հյուսիսային մասում, ներքուստ, մուտքի անկյունից, 6 տող.*



ԵՍ ՄԽԻԹԱՐ, ՆՈՐԱՏՎԱԾ ԴԷՄ|ԵԹԱՐՍ, ՈՐ ԿԱՄԱԿԻՑ ԵՒ ԱՒԳՆԱԿԱՆ Ե|ՂԷ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԵՒ ՇԻՆՈՒԹԵ. ՍԲ. ԼՈՒՍ|ԱՒՈՐՉԻՍ, ԵՒ ՆԱ ՍԱՀՄԱՆԵՑ ԻՆՁ|Ի ՏԱՐԻՆ :Բ: ԺԱՄ ՁՍԲ ԽԱՉԻՆ ՏԱՒՆՆ. ԿԱ|ՏԱՐԻՉՔ ՀՐԱՄԱՆԱԾ ՄԵՐՈՑ ԱՒՐՀ(Ն)ՅԻՆ ՑԱՑ:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդին, XIII դարի 20-ական թվականներ: Այս Մխիթարի անվամբ 1211 թ. գրված արձանագրություն տե՛ս № 49:*

Հրատ. *Սմբատյանց, 487: Ղալայան, XVIII, 120: Երկուսն էլ Դէմեթար- բառի փոխարեն գրել են* առաջնորդ:

Լուսանկ. 14

33. ԵԿԵՂԵՑՈՒ *հյուսիսային պատի արևմտյան մասի վերևում, քիվի տակ, արտաքուստ, 7 տող.*



ԵՍ ԽՈՅՏԱՆ ԴԷՄԷԹԱՐՍ ՆՈՐ|ԱՏՎԱԾ, ԱՒԳՆԱԿԱՆ ԵՂԷ ՍԲ. ԳՐԻԳՈՐ|ԻՍ ԸՆՁԱՒՔ ԻՄԱՒՔ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՍ|ՍԱՀՄԱՆԵՑ ԻՆՁ Ի ՏԱՐԻՆ :Բ: ԱՒՐ|Ի ԳԻՒՏ ԽԱՉԻՆ. ՄԻՆՆ ԻՆՁ ԵՒ ՄԻՆՆ ԿԵ|ՆԱԿՑԻՆ ԻՄ ՔԻՍՏՈՆԷԻՆ. ԿԱՏԱՐ ԻՉՔ ՀՐԱՄԱՆԱԾ ՄՆՐՈՑ ԱՒՐՀՆԻՆ ՑԱՑ:

Ծանոթ. *Ժամանակը որոշվում է Խոյտանի մի այլ արձանագրությամբ, որը գտնվում է գերեզմանատանը, խաչքարի վրա, թվագրված 1221 թ.:*

Լուսանկ. 15

34. ԵԿԵՂԵՑՈՒ *արևմտյան պատի վերին մասում, քիվի տակ, արտաքուստ. սպիտակավուն երեսպատման քարի վրա, երկու խաչ և շուրջը.*



ԱԾ. ՈՂՈՐՄԻ ԿԱՐԱՊԵՏԻՆ . . . . .
ԹՎ. :ՈԿԶ:(1217) ԿԱՆՆԵՑԱՒ ՍԲ. ԽԱՉՍ:

35. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային պատի կենտրոնում, ներքուստ, 8 տող.



ԹՎ. :ՉՂԳ: (1344):
ՇՆՈՐՀԻՒՆ ԱՑ. ԵՒ ՊԱՐՈ-
ՆՈՒԹԵ. ԻՇԽԱՆԻՆ ՀԱՑՈՑ|
ԲՈՒՐԹԷԼԻՆ, ԱԾԱՏՈՒՐ ՁԱ-
ԽԱԿԱՑ ԻՄ ԲԵՇՔԵՆԱՑ| ԵՒ
ԻՆԱՆԻԿԻՆ. ԵՍ, ՄԵՂՈՒՑ-
Ե[Ա]Լ ՍԱՄԻ. ԱՑ ԱՎԱԳՍ,
Վ[Ա]ՍՆ ՑԵՐԿ[Ր]ԱՐ ԿԵՆԴԱ-
ՆՈ[Ւ]ԹՆ. ՊԱՐՈՆԱՑ ՄԵՐՈՑ,
ԿԱՄԱԿԻՑ ԵՂԷ ՇԻՆՈՒԹԵԱՆ
Վ[Ա]ՆՔ|ԻՑՍ ԵՒ ԵՏՈՒ ԻՄ ՀԱ-
ԼԱԼ ԸՆՁԻՒՔ ԳՆԱԾ Ի ՆՈՐԱՏՎԱՑ ՋՐՈ. Վ[Ե]|ՐԱ:Ա:] ԱԿՆ ՋԱՂԱՑ Ի ՍԲ
ԳՐԻԳՈՐՍ: ՄԽԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ Ի|ՏԱՐԻՆ :Գ: ՊԱՏԱՐԱԳ ԻՆՁ, ԱԻԱԳ
:Ե: ՇԱԲԱԹ ԱԻՐ. ԿԱՏԱՐԻՉՔ ԱԻՐՀՆԻՆ ՑԱՑ:

Ծանոթ. Հրատարակիչները 3 տողում ԻՆԱՆԻԿ անձնանունը կարդացել են ԻՎԱՆԻԿ, նույնպես՝ մեղուցեալ բառը՝ Սամեղ անձնանուն:

Հրատ. Սմբատյանց, 486; Լալայան, XVIII, 119; Ջալալյանց, II, 128; Ալիշան, 47;
Լուսանկ. 16

36. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային պատի կենտրոնում, նախորդի անմիջական տակը, չավարտված արձանագրության 1 տող.

ՅԱՆՈՒՆ ԱՐԱՐՉԻՆ ԱՑ. ԵՒ ՅԱՇ[Խ]ԱՐԱԿԱԼՈՒԹԵ. ՄԵՐ . . .

Լուսանկ. 16

37. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային մույթի վրա, ներքուստ, 6 տող.



. . ԱԳԱՐԱԿԻՍ Մ . . . . Ս ԻՄ ՄԽԱ-
ԲԱՆԵՑԱ ՎԱՐԴ|ԱՊԵՏԻՍ [ԻՄ] ԸՆՁԱՒՔ
ԻՄԱՒ ՍԱՀՄԱՆԵ[Ա]ՑԻՆ ԻՆՁ| :Ա: ԺԱՄ Ի
ՏԱՐԻՈՋՆ. ՅԱՑՏՆՈՒԹ|Ե[Ա]Ն ՃՐԱԳԼՈՒՑԻՆ
ԱՆԽԱՓԱՆ:

Ծանոթ. Գրված է անարվեստ գրչի ձեռքով: Հավանաբար XIV դարի սկիզբ:

Լուսանկ. 17



38. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային մույթի վրա, ներքուստ, մանր խաչերի գլխին.

ԱԾ.|ՈՂՈՐՄԻ ՍԲ. Խ[Ա]Չ|ԻՍ ՏԻՐՈՋ|
ՀՈԳՈ[Ի]Ն. ԱՄԵՆ:

*39. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային պատի վերին մասում ներքուստ, ագուցված խաչքարի տակին 2 տող.*

ՀԱՋՄՄԱՆ
ԿԱՆՑԻ

ՀԱՋԱՐՄԱՆ| ԿԱՆ|ԳՆԵ|ՑԻ:

*40. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային պատի վերին մասում, արտաքուստ, մեծ արձանագրության տակ. 2 տող.*

ԵՍՄԳԻՍՄԴԻԴԻԼԻԽԱՆԻՆԵԿԻԴՈ-ՌՆՄԲԼՌԱՄՉԻՍՄՄԻՆ:Գ:
ՊԱՏՄԱԳԿԱՐՄՈՂՔԱՀ ԻԹ ԱՅ

ԵՍ ՍԱՐԳԻՍ ՈՐԴԻ ԴԻԼԻԽԱՆԻՆ ԵԿԻ ԴՈՒՌՆ ՄԲ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՍ. ՏԱՐԻՆ:Գ:|ՊԱՏԱՐԱԳ. ԿԱՏԱՐՈՂՔ ԱՒՐՀՆԻՆ Ի ՔՍ. ԱՑ:

Ծանոթ. *Այս Սարգսի տապանաքարը գտնվում է Նոր Բայազետի գերեզմանատանը՝ թվագրված 1502 թ.:*

*41. ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան պատին, ներքուստ.*

Ի պարոնութեան Իւանէի և Շահնշահի ես տէր Պետրոս վարդապետ նանդերձ եղբարբ ընծայիւք և ստացուածովք շինեցի զեկեղեցիս:

Ծանոթ. *Այս արձանագրությունը մենք տեղում չգտանք:*

*Հրատ. Ջալալյանց, Բ, 128: Սմբատյանց, 487: Լալայան. XVIII, 119:*

ԳՅՈՒՂԱՄԻՋՈՒՄ ՑՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

*42. ԽԱՉՔԱՐ, մեծ, կանգնած ճարտարապետորեն ձևավորված բարձր պատվանդանի վրա, կոչվում է «Հազարխաչ», գտնվում է գյուղի հյուսիսային ծայրին. գոմերի բակում. պատվանդանի վրայի բարձի արևմտյան երեսին 6 տող.*



ԱՆՈՒԱՄ|Բ|Ն ԱԾ. :ՈՀԵ:(1226) ԹՎԻՍ, ՅԻՇ|ԽԱՆՈՒԹԵ|Ա|Ն ԱԹԱԲԱԿԻՆ ԻՒԱՆ|Ա ԵՒ ԱՒԱԳԻՆ. ՇԱՀՆՇԱՀԻ, ԵՍ ՄԵՓՈՐԵԼՍ| ԽՈՇԱԲԻՆ ՍՆՈ|Ի|ՑԱԾՍ, ՆՈՐԱՏՈ|Ի|Ս ԿԱՑՈ|Ի|Ց ԶԻՍ.|ՈՐԺԱՄ ԱՑՈ. ԲԱՐԿՈՒԹԵՆ ՇԱ|Ր|ԺԵՑԱՒ ՍՈՒԼՏԱՆՆ|ԽՈՐԱՍԱՆԱ ԿՈՏՈՐԱԾՍ ԲԱԶՈՒՄ ԱՐԱՐ:

*Նույն բարձի հարավային երեսին, 5 տող.*



ՄԵՓՈՐԵԱԼՍ ՇԻՆԻՍ, ԽԱԴԱ-ԿՍ, Հ|ԱՆԻ ՓԱՍԻԼՍ ՇԻՆԵՑԻ ԽԱՉՍ, ԿԱ[Ն]Գ|ՆԵՑԻ [Ի] ՓՐ-ԿՈՒԹԻ|Ի]Ն ԻՆՁ, ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ. ՑԵԶՐ ՄԵ[Ց]ԴԱՆԻՍ.| ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՀԻՇԵՑԷՔ:

Ծանոթ. *Հրատարակիչների մոտ թերի է և աղավաղված։*

*Հրատ. Սմբատյանց. 484։ Լալայան. XVIII, 116։*

Լուսանկ. 18

**43. *ԽԱՉՔԱՐ*,** *մեծ, վերին մասը սրանկյուն, կանգնած է պատվանդանի վրա ս. Աստածին եկեղեցուց արևմուտք, նեղ փողոցի մեջ. պատվանդանի հարավային երեսին 6 տող.*



ԹՎ[Ի]Ն :ՈՂ:(1241) ԵՍ ՄԵՂԱՒՈՐ |ՆԱԳԻՐԱՑՍ ԿԱՆԳՆԵՑԻ Զ|ԽԱՑՁՍ. ԳԼՈՒԽՆ ՍԲ. ԳՐԻԳՈՐ՝ ԲԱՐԵԽԱՒՍ |ՀՈԳՈՅ ԻՄ. ԲՈՒՆՆ՝ ԱԾԱԾԻՆ՝ ՄԱՄԻՆ ՀՈԳ|ՈՑՆ, ԻՄ ԿԵՆԱԿՑԻՆ:ՈՎ. ԿԱՐԴԱՑՔ ՑԻՇԵՍՋ|ԻՔ Ի ՔՍ. ԱՄԵՆ՝ ԱԾ ՈՂՈՐՄԵԱ ԵՒ ՁԵԶ:

Ծանոթ. *ՆԱԴԻՐԱՑ անունը ՆԱԴԻՐ անվան ժողովրդական ձև է։*

*Խաչքարերը երբեմն ունենում են իրենց կոչումները՝ ամենափրկիչ կամ որևէ սրբի անուն. ներկա դեպքում բուն խաչքարին և նրա պատվանդանին արվել են տարբեր անուններ և նվիրվել մեկը՝ ամասնու., իսկ մյուսը՝ կնոջ հիշատակին։*

Լուսանկ. 19

**44. *ԽԱՉՔԱՐ*,** *մեծ գեղաքանդակ, ընկած է հաջորդի մոտ, քիվին և խաչի թևերի շուրջը 2 տող.*



ԵՍ ՍԱՏԱՂԷՍ ԿԱՆԿ[Ն]ԵՑ[Ի] ՍԲ. ԽԱՉՍ ՄԱՒՐՆ ԻՄ ԽՈՒԲԱԹԻՆ.|
ԹՎ. :ՌԲ:(1553):

Ծանոթ. *առաջին տողի վերջին երկու տառը հարավային կողին։*

45. **ԽԱՉՔԱՐ**, *մեծ և գեղաքանդակ, կանգնած է գյուղամիջում, տոհմական գերեզմանոցում,*



*Քիվին 1 տող.*

ԵՍ ՏԻՐԱՏՈՒՐՍ Կ[Ա]Ն[Գ]ՆԵ[Ց]-ՑԻ ՍԲ Խ[Ա]Չ[Ս] :ՌԲ: (1553) ԹՎ.

*Թիկունքին 6 տող:*

ԵՍ ՃՈՂ[ԱԵՑԻ] ՏԻՐԱՑՏՈՒՐՍ ԿԱՆԿ[Ն]ԵՑԻ ՍԲ ԽԱՉՍ ԻՄ ՄԷՐ ԱՂԱՄՍՈՒԹ-ՅԱՆԻ, ԵՐԴՈՒԹՈՒՆ ԻՄ ԱԽԲԷՐ. ԱԾ. ՈՂՈՐՄԻ Հ[Ո]ԳՈՑՆ :

*Հյուսիսային կողին 2 տող:*

ՃՈՒՂԵՑԻ ...:Ջ: Գ: Թ: (1550). ՊԵՏՐՈՍ ... ՄՆՔ ՈՐԴԻ ԵՄՔ, ՄՈՒՆՊԱՐԱՔ Լ[Ի]Ն[Ի] . . .

*Հարավային կողին 2 տող.*

ԵՍ ՍԱՏԱՂԷՍ ԿԱ[Ն]ԿՆ[ԵՑԻ] ՍԲ Խ[Ա]Չ[Ս] Բ[Ա]ՐԵ[Խ]Ա[ՒՍ] ԵՂԲԱՒՐՆ ԻՄ ՄԱՐՏԻՐ[Ո]ՍԻՆ:

Լուսանկ. 20

46. *Խաչքար, ընկած է նախորդի մոտ, քիվին 1 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ՍԱՐԳԻՍԻՆ:

Ծանոթ. *ժամանակակից նախորդներին:*

47. **ԽԱՉՔԱՐ**, *կանգնած է նախորդների մոտ, քիվին 1 տող.*



ԽԱՉ[Ս] ԲԱՐԷԽԱՒՍ ԷԹԱՐԻՆ:

Ծանոթ. *ժամանակակից է նախորդներին:*

48. **ԽԱՉՔԱՐ**, *կանգնած է եղել գյուղի արևմտյան եզրին, գետափին, հին կամուրջի մոտ, որի պատվանդանի վրա եղել է կամուրջի շինության արձանագրությունը.*

Ի թվին Հայոց :ՈԿ: (1211), ի թագաւորութեան Աղեն, ի պարոնութեան Իւանէին, ես Քաջազատս շինեցի զկամուրջս և կանգնեցի զխաչս . . .

*Հրատ. Ջալալյանց. II 128. Ալիշան, 47. Սմբատյանց, 487. Լալայան, XVIII, 120.*

***49. ԽԱՉՔԱՐԻ** ճարտարապետորեն կառուցված մեծ պատվանդանի երեք քարերի վրա. կից Ա. մատուռի հյուսիսային պատին, 7 տող.*



Ի:ՈԿ:(1211) ԹՎ. Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՑ ՄԵՐՈՑ ԶԱՔ|ԱՐԷԻ ԵՒ ԻՒԱՆԷԻ, ԵՍ ՄԽԻԹԱՐ ՓԵՃՈՒՐԱՆՑ, ՈՐԴԻ ԴԱՒԹԻ, ՇՆ|ՈՐՀԻՒՆ ԱՅ. ԵՒ ՀՐԱՄԱ-ՆԱՒ ՄԵԾԻՆ ԻՒԱՆԷԻ ԵՂԷ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԵԾ|ԱՀՌՉԱԿ ԳԵԱՒՂԻՍ ՆՈՐԱՏՈՒԱՑ. ԿԱՄ ԵՂԵՒ ԻՆՉ ԿԱՆԳՆԵԱԼ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԵ ՆՆՋԵՑԵԼՈՑ ԻՄՈՑ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԻՇԵՑԷՔ Ի ՏՐ|ՈՒՆ ԵՒ ՏԱՃԿԱՑ ՈՎ ԱԶԱՏԱԿՐԱՆՈՒԹԻ ԱՅԼՆ ՍԻ . . . Ի ԴԱՆԷ, ԵՐԵՏ ԻՆՉ ԵՒ ՈՐԴՈՑՆ ԻՄ:

*Ծանոթ. Վերջին երկու տողը գրված են այլ գրչությամբ, հետագա ավելացում է և իմաստը՝ մութ.*

*Հրատ. Շահխաթունյանց, Բ, 239։ Ալիշան, 47։ Սմբատյանց, 485։ Լալայան, XVIII, 118։*

Լուսանկ. 21

***50. Ա. ՄԱՏՈՒՌԻ** հյուսիսային պատի վերին մասում. 10 տող.*



. . . Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵՆ . . . . . . ՈՐԴԻ ՄԽԻ|ԹԱՐԱ, ՈՐ ԵՂԷ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԵԾԱՀՌՉ|ԱԿ ԳԵՂԻՍ ՆՈՐԱՏՎԱՑ ԿԱՄ ԵՂԵՒ ԻՆՉ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽՈՐԱՆՍ ԵՒ ԶՆՇԱՆՔՍ Տ|ԵՐՈՒՆԱԿԱՆ ՅԻ-ՇԱՏԱԿ ՀՈԳՈ ԻՄՈ ԵՒ|ԶՈՒԶԱԻՆ ԵՒ ՀԱՒՐ ԻՄՈ ՄԽԻԹԱՐ|Ա ԵՒ ՀԱ-ՄԱՒՐԷՆ ԱՄԵՆԱՑՆ ՆԸՆՋԵՑԵԼՈՑ Ի|ՄՈՑ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՍՄԱ ՄԵԶ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

*Ծանոթ. Գրված է նախորդից քիչ հետո, երբ Մխիթարին հաջորդել է նրա որդին՝ գյուղի առաջնորդության պաշտոնով. դժբախտաբար անունը չի պահպանվել։*

*Առաջին և երկրորդ տողերի սկիզբը պարունակող քարերը դեռևս Շահխաթունյանի օրոք կորած են եղել։*

*Բոլոր հրատարակիչների մոտ կառուցողի անունը ևս Մխիթար է վերծանվել. Ալիշանը իրավամբ կասկածում է հայր ու որդի նույն անունով կոչվելու մասին։*

*Հրատ. Շահխաթունյանց Բ. 239։ Ալիշան, 47։ Սմբատյանց, 485։ Լալայան, XVIII, 118։*

*51. Ա. ՄԱՏՈՒՌԻ մուտքի հարավային կողի ստորին մասում, Թերի արձանագրություն, 1 տող.*

ԵԱՆԴՌՃՂԳ . . . ԵԱՆ ԹՎ. :ՌՃԳԳ:(1744):

*52. Ա. ՄԱՏՈՒՌԻ արևմտյան պատի գլխին կանգնած մի քարի վրա խաչ և Թևերի արանքներում.*

ԱԾ
ՈՂ
Մ ՈՐ

ԱԾ. ՈՂ.ՈՐ⌊ՄԵԱ⌊:

*53. ԽԱՉՔԱՐ, մեծ, խոշոր գծերով, գեղաքանդակ, կանդնած է երկաստիճան բարձր պատվանդանի վրա. գտնվում է գերեզմանատան հարավային մասում. պատվանդանի վրա չավարտված արձանագրության 3 տող.*

Ի ԹՍ·Ո·Հ· Դ·ԵՍԽՈԴԱՆ
·Ե·ԴԱՄԴԵՄԵԹԱՐԿԱՑԻ
ՆՈՐ

Ի Թ⌊Վ.Ի⌊Ն:ՈՀԴ:(1225) ԵՍ ԽՈԴԱՆ| :Ե:(5) [Դ| ԱՄ ԴԵՄԵԹԱՐ ԿԱՑԻ|
ՆՈՐ⌊ԱՏՈՒԱՑ⌊ . . . . .

Ծանոթ. *Նորագույն այլ արձանագրություններում մեջ անունը գրված է ԽՈՑԴԱՆ, իսկ ԴԵՄԵԹԱՐ-ի փոխարեն ԱՌԱՋՆՈՐԴ։*

Լուսանկ. 22

*54. ԽԱՉՔԱՐ, մեծ, կանգնած սրբատաշ պատվանդանի վրա, գերեզմանատան արևմտյան մասում. հյուսիսային կողին 7 տող.*

ԻԹՈՀ·
Դ:ԱԾ
ՈՂՄՌ·
ՐՄԻԱ
ՊՈՒ
ՄԱՅԼ
ԻԱՄ

Ի ԹՎ. :ՈՀԴ:(1225). ԱԾ. ՈՂ[Մ]ՈՐՄԻ
ԱՊՈՒՏԱՑԼԻ· ԱՄ⌊ԵՆ⌊:

Լուսանկ. 23

*ԽԱՉՔԱՐԵՐ*, *երկու հատ, մեծ ու պարզ, կանգնած են մի պատվանդանի վրա, գերեզմանատան կենտրոնում։*

ԳՌԼԻՆՄԻՆԱՅԽԱԹՌՆԻՆ

ԹՎ ՋԸ

ԱԾՈՂՈՐՄԻ ԿՈՍՏԱՆՏ

*55. Ա. ՎԵՐԻՆ և ստորին մասում, 3 տող.*

ԳՈՒՎԻՆ, ՄԻՆԱՑԽԱԹՈՒՆԻՆ.|
ԱԾ. ՈՂՈՐՄԻ ԿՈՍՏԱՆՏԱ.|
ԹՎ.: ՋԸ: (1459):

*56. Բ. ՎԵՐԻՆ և ստորին մասում, 2 տող.*

ՓԱՐԽՈՉԻՆԱԺԷՆԱՄԷՆ

ԱԾՈՂՈՐՄՍԱՐԽԱՇԻՆ

ՓԱՐԽՈՋԻՆ, ԱՄԷՆ ԱՄԷՆ.
ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՍԱՐԽԱՇԻՆ:

Ծանոթ. *Երկու խաչքարերը շինված են նույն վարպետի ձեռքով և ժամանակակից են։*

*57. ԽԱՉՔԱՐ, մեծ, պարզ, գտնվում է նախորդներին մոտ, դեպի հյուսիս, քիվին և ստորին մասում 4 տող.*

ԱԾՈՂՈՐՄԻՓԱՇԻՆ=ՄԷԼՔ
ԻՆՏԱՏԼԲԷԿԻՆՍԻՄԻԿԻՆ:ՋԱՐ
ՀՈՒՐԻՆՇԱՏՆ
ԹՎ ՋԹ

ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՓԱՇԻՆ, ՄԵԼԻՔ|
ԻՆ, ՏԱՏԼԲԷԿԻՆ, ՍԻՄԻԿԻՆ, ՋԱՐ|
ՀՈՒՐԻՆ, ՇԱՏԻՆ: |ԹՎ.: ՋԹ: (1460):

Ծանոթ. *Առջևում կա մեծ տապանաքար, առանց տապանագրի։*

*58. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, եղել են մի պատվանդանի վրա, մեկն ընկած է այժմ. գտնվում են նախորդների մոտ, նույն շարքում. կանգնած է քիվին 1 տող.*

ԽԱԲԱՐԷԽԱԻՍՄՐԱՆԻՍԻՆ

ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՏՐ. ԱԻԱՆԻՍԻՆ Է:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդին.*

*59. ԸՆԿԱԾԻ քիվին 1 տող.*

ԽՍԲԷԽՍՀՆՋԱԴԻՆ:ԵՒՍԱՆԱՄԻՆ

ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՀՆԱՉԱՆԴԻՆ ԵՒ ՍԱՆԱՄԻՆ:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդներին, XV դար։*

*60. ԽԱՉՔԱՐ, փոքր, նախորդներին մոտ հյուսիսից, քիվին 1 տող.*

Ի ՄԲԽՍԲԷԽՍՏՐՍԵՓՆՍ...

Ի ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՏՐ. ՍՏԵՓԱՆՈՍԻՆ:

Ծանոթ. *XV դար։*

*61. ԽԱՉՔԱՐԵՐ երեք հատ, մեծ, կանգնած են իրար կից երկու պատվանդանի վրա, որոնցից միայն երկուսն ունեն արձանագրություն. գտնվում են նախորդների մոտ. հյուսիսայինի ստորին մասում, 3 տող.*

ՀՈԳՈՅՆՈՐԹԵՐ
ԱՅԿԱՄԱՐ+ԽԵԺԱ~ ՀՈԳՈՑՆ. ՈՐ ԹԵՐ|ԱՑԿԱՏԱՐ Փ⌊Ո⌋ԽԵՑԱՒ |Ի ՔՍ
ԻՔՍ

*62. ՄԵՋՏԵՂԻՆԻ ստորին մասում 2 տող.*

ԽԱՍՔՍԱԾՈՂՈՐՄԻՆՈ ԽԱՉՍ ՔՍ. ԱԾ ՈՂՈՐՄԻ ՆՈ|ՅԱՅ. ԱՄԷՆ:
ՅԱՅՆ

*63. ԽԱՉՔԱՐ, մեծ, գտնվում է գերեզմանատան հյուսիս-արևմտյան ծայրին, քիվին և թևերի շուրջը 2 տող.*

ՍԲԽՍԲՄԽՍՈՎԱՆԷՍ+ՀՆԻՆ ՍԲ. Խ⌊ԱՉ⌋Ս ԲԱՐ⌊Է⌋Խ⌊ԱՒ⌋Ս ՈՎԱՆԷՍ
ԱՎԱՆԷ + ԿԱՉԷՑ Թ⌊Ա⌋Հ⌊Ա⌋Ն⌊ԱՅ⌋ԻՆ. |ԱՎԱՆԷ⌊Ս⌋ ԿԱՉ⌊Մ⌋ԷՑ:

*Ծանոթ. Դիմացը մեծ տապանաքար է, առանց տապանագրի։*

*64. ԽԱՉՔԱՐ, մեծ, պարզ, գտնվում է գերեզմանատան հյուսիս-արևմտյան մասում, ճակատին 2 տող.*

ԻԹՎԱԿԱՆԻՍՀԱՅՈՑ:ՋԾԱ Ի ԹՎԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ: ՋԾԱ: (1502):
+ԽԱՉԻՓՐԿՈՒԹՂԱՍՈՒՄԱ ԽԱՉ⌊Ս⌋ Ի ՓՐԿՈՒԹ. ՂԱՍՈՒՄԱ:

*Ծանոթ. Նույն պատվանդանի վրա կանգնած է և երկրորդ խաչքարը. ու դիմացները երկու մեծ տապանաքարեր. բոլորն էլ առանց արձանագրության։*

*65. ԽԱՉՔԱՐ մեծ, մշակված պատվանդանի վրա, դիմացը օրորոցաձև տապանաքար. գտնվում է նախորդի մոտ, քիվին 1 տող.*

ՓԵՍԴԱՆԻԵԼԿԱՆԳՆԵՑԻԶԽԱՉՍ [Փ] ԵՍ ԴԱՆԻԵԼ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ:

*Ծանոթ. Ըստ ամենայնի նման է նախորդին. XVI դարի սկիզբ։*

*66. ԽԱՉՔԱՐ մեծ, գտնվում է կենտրոնական մասում. ստորին մասում միայն թվականը.*

ԻԹՎՋ Ի ԹՎ. :ՋԾԴ: (1505):
ԾԴ

*Ծանոթ. Նույն պատվանդանի վրա կա և մեկ խաչքար, առանց արձանագրության։*

*67. ԽԱՉՔԱՐ, ինքնատիպ, մի քարից շինված պատվանդանն ու խաչքարը. պատվանդանի վրա 6 տող. խաչքարի հորավային կողին 2 տող.*

ԹԻՎՋԿԴ
ԵՍՊԷԿԻՇԷ
ՍԿԱՆԿԵՑԻ
ՑԻՋԽԱՍՓՐ
ԿՈՒԹԻՀՋՈՆՋ
ՈՋՈՐԻՆ

ԶՄԿՐՏ
ԻՉԿԱՉ
ՄՈՂՍԻՂ
ԷՅԷՔ
ԶՎԱՐԴ
ԻԿՍԻՂ
ԷՅԷՔԻ
ՔՍ

*պատվանդանի վրա՝*

ԹԻՎ։ՋԿԴ։(1515)|ԵՍ ՊԷԿԷՇԷ Ս
ԿԱՆԿՆԵՑԻ|ԻՑԻ ՋԽԱՉՍ ՓՐ|ԿՈՒԹԻ
ՀՈՅԳՈՅՆ ԳՈԳՈՐԻՆ։

*խաչքարի կողին՝*

ԶՄԿՐՏ|ԻՉ ԿԱՉ|ՄՈՂՍ ԻՇ|ԵՅԷՔ
ԶՎԱՐԴ|ԻԿՍ ԻՇ ԵՑԷՔ Ի ՔՍ։

Լուսանկ. 21

*68. ԽԱՉՔԱՐ, պարզ, նախորդի մոտ, ստորին մասում 3 տող.*

ԵՍՊ
ԷԿԷՍԿԱԵՑԻԽԱՍՓԿՐԹՆ
ՀՈԳՅՆՍԻՄՀԱՒՆՅՂ

ԵՍ Պ|ԷԿԷՇՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹ|
ՀՈԳՈՅՆ |Ս| ԻՄ ՀԱՒՐՆ. ՅԻՇԵՑԷՔ։

Ծանոթ. *Անշուշտ նույն անձն է նախորդի հետ, հետևաբար ժամանակակից։*

Լուսանկ. 25

ԹԱՂՐԻՂԱԼԵՆՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ, ՈՐԸ ԳՏՆՎՈՒՄ Է
ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ

*69. ԽԱՉՔԱՐ, մեծ, զեղաքանդակ, քիվին ուռուցիկ տառերով 2 տող.*

ԽՆՍ ԲԱՐԽՈՍԷ ԽՈՑԱԴԵՂԻՆՈՐԴՈՅՆ ԹԱՂՐԻ
ԻՂՈՒԼԻՆ ՂՈՒԿԱՍԻՆՍԱՒԼԹԱՆ ՂՈՒԼԻՆՋԻՂԷ

ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍԻՍ Է ԽՈՑԱԴԵՂԻՆ ՈՐԴՈՑՆ ԹԱՂՐԻՂՈՒԼԻՆ, ՂՈՒԿԱՍԻՆ,
ՍԱՒԼԹԱՆ ՂՈՒԼԻՆ. ՅԻՇԵՑԷՔ։

Ծանոթ. *Նույն պատվանդանի վրա կա դատարկ փոս մի խաչքարի համար, որն այժմ կորած է։*

*70. ԽԱՉՔԱՐ, պատվանդանի վրա, նախորդի հարավում. քիվին և ստորին մասում 2 տող.*

ԿԱՆԿՆԵՑԱՒ ԽՉՍ ՀՈԳՈ
✝
ԹԻՎՋՃԳ

ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ ՀՈԳՈ ԹՎ.։ՋՁԳ։ (1534)։

*71. ԽԱՉՔԱՐ, նախորդների մոտ. քիվին 2 տող.*

ԱԾՈՂՈՐՄԻՍԱՐԿԱՒ
ՂՈՒԿԱ ✝ ՍԻՆՔՍ

ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՍԱՐԿԱՒԱԳ|ՂՈՒԿԱՍԻՆ. ՔՍ։

Ծանոթ. *Սրա շուրջը կան մի քանի դատարկ պատվանդաններ։*

72. ԽԱՉՔԱՐ, ընկած է նախորդների մոտ. քիվին ուռուցիկ տառերով 1 տող.



ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՄՈՒՍԷՍԻ ՀՈԳՈՅՆ:

Լալաեն. 26

73. ԽԱՉՔԱՐ, նախորդների մոտ, փոքր, քիվին ուռուցիկ տառերով 1 տող.



ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԱԿՈԲԻՆ ԵՒ . . .

Ծանոթ. Չի շարունակված, թեև տեղ կա։

74. ԽԱՉՔԱՐ, ընկած է պատվանդանի առաջ, նախորդների մոտ. քիվին 2 տող.



ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՏՐ. ԹԷՈՍԻՆ. ԱՐՂԵՅԻՆ:

75. ԽԱՉՔԱՐ, ընկած է նախորդների մոտ. քիվին 2 տող.



ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԹՈՒՐՎԱԴԻՆ
ԵՒ ՈՀԱՆԻՆ. ԹՎ. :Ջ: (1451):

Ծանոթ. Թվականը խիստ կասկածելի է, շատ է մաշված ու անորոշ։

Վերջին երկու խաչքարերի դիմաց կա երեք փոս ունեցող պատվանդան. երրորդ խաչքարը այժմ չկա։

76. ԽԱՉՔԱՐ, մեծ, կանգնած մեծ պատվանդանի վրա, նախորդների մոտ, ստորին մասում թերի, 1 տող.



ՔՍ. ԱԾ. ՈՂՈՐՄԻ . . .

Ծանոթ. Նկատի ունենալով պահպանված այս 8 տապանագրերի մեջ գործածված անունները և թվականները՝ հնարավոր է ենթադրել, որ Մելիք Թանգրիղուլին այն անձնավորությունն է, որն ստորագրել է Գեղարքունիքը Տաթևի թեմ հաստատող փաստաթուղթը և որի նստավայրը եղել է Մարտունու շրջանի Վերին Գյոլադրան, այժմ անմարդաբնակ, իսկ հնում Փառակունք-Փառակունիս կոչված։

Նորատուսը կամ նրանց նախորդների, կամ մի ճյուղի բնակավայրն է եղել։

Շահխաթունյանց, II, 258։ Ալիշան, 34, Դիվան, II, 27։

## ՄԵԼԻՔ ԲԱՐԻՔԵՆՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ, ՈՐԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ

*77. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, օրորոցաձև, հարավային երեսին հեծյալ և մի մարդ, որը ձեռքերին ունի գաթա և գինու գավ, իսկ հյուսիսային երեսին՝ խորաններ ու խաչեր, որոնցից վերև երկու երեսին շարունակվող երկար արձանագրություն՝ մեկական տող, ապա արևելյան ճակատին 4 տող.*



Ի ԹՎ. :Ռ: ԱՅՍ :Զ: (1557) ՃԱԼԱԼ ԷՊԻՍԿՈՊՈՍՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՄԱԼԻՔ ՊԱՐԵԳԻՆ, ԹՈՌ ԿՈՒՆԴՈՒԶ ԱՂԻՆ. ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ | ՀԱԽՆԱԶ| ԱՐԻՆ:

Ծանոթ. *Թվական երկու տառերի արանքում ԱՅՍ բառի իմաստը անհասկանալի է։ ԱՂԻՆ բառը հնարավոր էր Աղին վերծանել, բայց հաջորդի մեջ էլ կրկնվում է։ Ջալալ եպիսկոպոսը տապանաքար չինել ավողն է։*

Լուսանկ. 27 *(մի մասը)*

*78. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, նման նախորդին և նրա հարավում. 2 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՂԻ|ՊԷԿԻՆ;

*79. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, փոքր, օրորոցաձև, նախորդի հարավում, 1 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՇԱՀՍԱԻԼԹԱՆԻՆ;

*80. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, նախորդների մոտ, հարավային երեսին սազ, գավը ձեռքին մարդ, մեկ ուրիշի ձեռքին՝ գործիքներ, ապա երկվող նվագարան փչող մարդը՝ նստած վիճակում. արևմտյան ճակատին 4 տող.*



ՄԲ. ԽԱՉՍ Բ|ԱՐԷԽԱԼԻՍ|ԱՂԱՄԻՆ.|ԾԱՌԱՅ ԱՅ:

Լուսանկ. 28

*81. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, նախորդների մոտ. հյուսիսային երեսին 2 տող.*



ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԼԻՍ ՏԱԿԻՆ. ԾԱՌԱՅ ԱՅ. ԹՎ.: ՌԽԹ: (1600):

82. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, վրան 1 տող.



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ՄԵԼՔՈՒՄԻՆ։

Ծանոթ. Գրչությունը Բիրամինն է։

## ԽԱՉՔԱՐԵՐ, ՈՐՈՆՔ ԻՐԱՐ ԿԻՑ ԿԱՆԳՆԱԾ ԵՆ ՆԱԽՈՐԴ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԻ ԴԻՄԱՑ

83. ԽԱՉՔԱՐԵՐ, կանգնած մի պատվանդանի վրա, գեղաքանդակ,
ա. քիվին և ստորին մասում 3 տող.



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ԽԱՆՈՒՄ ԱՂԻՆ.| ԲԻՐԱՄ ԿԱԶՄՈՂԱ.|Ի ԹՎ.:ՌԼԱ:(1582);

Ծանոթ. Ճակատի կենտրոնում պատկած է ննջեցյալը և երկու կողմերից երկնքական սգավորներ։

Լուսանկ. 29
(Միայն կազմողի մասը)

84. Բ. Քիվին 1 տող.



'ՍԲ.' ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ԳՈՋԿԱՑՊԵԿԻՆ.

Ծանոթ. Խաչքարի ճակատին և թևերի տակ սրբերի և մարդկանց պատկերներ.

85. ԽԱՉՔԱՐԵՐ երկու հատ. կանգնած միևնույն պատվանդանի վրա, կից նախորդներին հարավից, նույն տոհմական գերեզմանոցում.
ա. Քիվին և խորանի կողքերին 2 տող.



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ՈՒԼՈՒԽԱՆԻՆ. ԲԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ. ԹՎ.:ՌԽԹ: (1600);

86. Բ. Քիվին 1 տող.



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ՊԵԿՈՒՄԻՆ;

Ծանոթ. Քանդակների ոճը և գրչությունը վկայում են, որ խաչքարերի այս խումբը Բիրամ կազմողի կերտածներն են։ Նա սովորություն է ունեցել խմբական հուշարձաններից միայն մեկի վրա դնել իր ստորագրությունն ու թվականը։

Լուսանկ. 30

87. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, գեղաքանդակ, կանգնած մեկ պատվանդանի վրա, գերեզմանատան հյուսիս-արևմտյան եզրում։

Ա. Քիվին և խաչի վերին մասի կողքերին։



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ՄԵԼԻՔ ՊԵԿԻՆ. ԲԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ. ԹՎ. :ՌԼԱ: (1582):

Լուսանկ. 31

88. *Բ. ՔԻՎԻՆ 1 տող.*

ՍԲԽՉՍԲՐԽՍԱԴՐՊԷԿԻՆ — Ս̅Բ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԱԴԻՐՊԷԿԻՆ:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդին և Բիրամ կազմողի շինածն է:*

Լուսանկ. 32

89. ***ԽԱՉՔԱՐ***, *ընկած է պատվանդանի մոտ, նախորդներին կից հարավից, քիվին 1 տող.*

ՍԲԽԱՉՍՄԿՐՏԻՉԻՆ — Ս̅Բ ԽԱՉՍ ՄԿ(Ր)ՏԻՉԻՆ:

Ծանոթ. *Ժամանակակից նախորդներին,* XVI *դար:*

90. ***ԽԱՉՔԱՐ***, *գեղաքանդակ, պատվանդանի վրա, նախորդին մոտ, քիվին 1 տող.*

ՍԲԽԱՉԲԷԽՀՐԱՅՊԵՏՆ — Ս̅Բ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՀԱՐԱՑՊԵՏ(Ի)Ն:

Ծանոթ. XVI *դար:*

Լուսանկ. 33

91. ***ԽԱՉՔԱՐ***, *գեղաքանդակ, պատվանդանի վրա. նախորդներին մոտ. քիվին 1 տող.*

ԱԾՈՂՈՐՄԻԲԷԿԻՃԱՆԱ — Ա̅Ծ. ՈՂՈՐՄԻ ԲԷԿԻՃԱՆԱ:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդներին:*

92. ***ԽԱՉՔԱՐ***, *փոքր, ընկած է նախորդին մոտ, քիվին 1 տող.*

ԱԾՈՂՈՐՄԻԵԹԱՐԻՆ — Ա̅Ծ. ՈՂՈՐՄԻ ԵԹԱՐԻՆ:

Ծանոթ. XVI *դար:*

93. ***ՏԱՊԱՆԱՔԱՐ***, *մեծ, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան հյուսիս-արևմտյան մասում. հյուսիսային երեսին Թերի և հարավում չորս խորանների անկյուններում կազմողի ստորագրությունն ու թվականը.*

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽ ԱՒՍ

ԲԻ ՐԱՄ ԿԱԶՄՈ ՂԹՎՌ ԽԲ — Ս̅Բ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԲԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ. Թ̅Վ. :ՌԽԲ: (1593):

Ծանոթ. *Վաճառքի համար է շինված եղել, որի վրա միայն գնողի անունը պիտի ավելացվեր, բայց չի արվել:*



3—619

ՂԱԶԱՐԵՆՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ, ՈՐԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ

***94. ԽԱՉՔԱՐԵՐ**, վեց հատ, կանգնած են իրար կից, երեք մեծ կտորներից կառմած ընդհանուր պատվանդանի վրա.*

*Ա. Հատած եռանկյունի, ճակատին երեք խաչ և տակին 2 տող.*



ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ. ԹՎ.: ՌԽԶ: (1597). ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՂԱԶԱՐԻՆ:

Լուսանկ. 34

*95. Բ. ՔԻՎԻՆ 1 տող.*



ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԳՈՒԼՔԱՆԻՆ:

*96. Գ. ՔԻՎԻՆ 1 տող.*



ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՍՈՒԼԹԱՆԻՆ:

*97. Դ. ՔԻՎԻՆ 1 տող.*



ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԹԱՔԲԱՑ ՂՈՒԼՈՒԻՆ:

*Մանոթ. Անձնանունը կասկածելի, ունի նաև պակիվ. տե՛ս գծագրությունը։*

*98. Ե. ՔԻՎԻՆ 1 տող.*



ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՇԱՀՆԻԿԱՐԻՆ:

*99. Զ. ՔԻՎԻՆ 1 տ.*



ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԴՈՎԼԱԹ ԽԱՆՈՒՄԻՆ:

Ծանոթ. *Բոլոր խաչքարերը մի արվեստագետի, Քիրամի ձեռագործներն են և ժամանակով իրար մոտ։ Խաչքարերի դիմաց քանի չափ մանր ու խոշոր տապանաքարեր կան, բոլորն էլ անարձանագիր։*

ՎԱՐԴՈՒՏԵՆՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

***100. ԽԱՉՔԱՐԵՐ**, երեք հատ, երեքն էլ ընկած պատվանդանի դիմաց, որի վրա անցյալում եղել են ութ հատ. գտնվում են գերեզմանատան հյուսիս-արևմտյան մասում.*



*Ա. ՔԻՎԻՆ և խաչի շուրջը 4 տող։*

ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՎԱՐԴՈՒՏԻՆ ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ. ԹՎ. :ՌԽԶ: (1597):

Ծանոթ. *Անձնանունը կարելի է ՎԱՐԴՈՒՄԻՆ վերծանել։*

*101. Բ. ՔԻՎԻՆ 1 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԴԻՐԱԿՈՍԻՆ;

*102. Գ. ՔԻՎԻՆ 1 տող.*



ԽԱՉՍ ՄԷԼԻՔ ԲԷԿԻՆ;

Ծանոթ. *Բոլորն էլ Քիրամ կազմողի գործերն են և ժամանակակից, անկախ ննջեցյալների մա՞հվան ժամանակից:*

ԱՏԻՊԻԿԵՆՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

*103. ԽԱՉՔԱՐԵՐ, հինգ հատ, զեղաքանդակ, կանգնած են երեք քարից կազմած պատվանդանի վրա, Ատիպեկենց գերեզմանոցում, որը գտնվում է գերեզմանատան հյուսիս-արևմտյան մասում.*

*Ա. ՔԻՎԻՆ և խորանի վերին մասում:*



ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԱՏԻՊԷԿԻՆ.
ԹՎ. :ՌԽԸ: (1599) ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ:

Լուսանկ. 35

*104. Բ. ՔԻՎԻՆ և խորանի շուրջը, 3 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ՆԱԶԼՈՒԽԱ|ՆԻՆ·
ԹՎ. :ՌԽԸ: (1599);

*105. Գ. ՔԻՎԻՆ և ճակատին 2 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԿԱՆԿ-ՆԵՑԱՒ ՎԱՐՍԱՆԿԱՆ.
ԹՎ. :ՌԾ: (1601);

Ծանոթ. *Անձնանունը կասկածելի է. տե՛ս գծագրությունը:*

Լուսանկ. 36

*106. Գ. ՔԻՎԻՆ 1 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԸՍՏԵՓԱՆՈՍ ՔԱՀԱՆԱՅԻՆ;

Ծանոթ. *Վերջին երեք տառը շարունակված է կողին:*

Լուսանկ. 37

*107. Ե. ՔԻՎԻՆ 1 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱւԻՍյ ՄԷԼԻՔՊԷԿԻՆ:

Ծանոթ. *Բոլոր այս հինգ խաչքարերն էլ Քիրամ կազմողի ստեղծագործությունններն են և շինված 1599, 1601 թ. անկախ Ննչեցյալների մահվան ժամանակից:*

Լուսանկ. 38

ՍԱՐԳԻՍԵՆՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

*ԽԱՉՔԱՐԵՐ, հինգ հատ, գեղաքանդակ, կանգնած չորս քարերից շինված ընդհանուր պատվանդանի վրա՝ Սարգիսենց գերեզմանոցում, որը գտնվում է գերեզմանատան հյուսիս-արևմտյան մասում.*

*108. Ա. ՔԻՎԻՆ և խորանի շուրջը 2 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՍԱՐԳԻՍԻՆ.

ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ. ԹՎ.: ՌԾԱ: (1602):

Ծանոթ. *Երկրորդ տողն ամբողջովին տուուցիկ տառերով է:*

Լուսանկ. 39

*109. Բ. ՔԻՎԻՆ 1 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱւԻյՍ ԽՕՆՉԱՐԻՆ:

*110. Գ. ՔԻՎԻՆ 1 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱւԻյՍ ԳՐԻԳւՕյՐԻՆ:

*111. Դ. ՔԻՎԻՆ 1 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱւԻյՍ ԳԱԻՋԻՆ:

Լուսանկ. 40

*112. Ե. ՔԻՎԻՆ 1 տող.*



ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱւԻյՍ . . .

Ծանոթ. *Պատվանդանի վրա կա մեկ խաչքարի փոս ես, այժմ դատարկ:*

*Բոլոր այս խաչքարերը Քիրամ կազմողի շինածններն են և նույն 1602 թ՝. անկախ ննչեցյալների մահվան ժամանակից:*

Լուսանկ. 41

**113. ԽԱՉՔԱՐ**, *փոքր, գեղաքանդակ, ընկած է հյուսիսային մատուռի արևմտյան պատի տակ, դրսից. քիվին և խաչի շուրջը 4 տող.*

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽԱՅԱ|ԿՈԲ
ԷՊՍ
ԻՆ
ՔԻՐԱՄԿ | ԱԿՄՈՂ

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒ[Ս] ՅԱԿՈԲ ԷՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ։

Ծանոթ. *Քիրամ կազմողով որոշվում է և մոտավոր ժամանակը, XVI դարի առաջին տարիները։*

**114. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *օրորոցաձև, գերեզմանատան հյուսիս-արևմտյան մասում, արևելյան ճակատին 4 տող.*

ԱՂԱՂԱՐ
ԻՆ ԹՎ
ՌԺԸ
ԷՐ

ԱՂԱԶԱՐ|ԻՆ. ԹՎ.։ՌԺԸ։ ԷՐ (1569);

**115. ԽԱՉՔԱՐԵՐ**, *երեք հատ, կանգնած միևնույն պատվանդանի վրա, հյուսիս-արևելյան մասում։*

*Ա. ՔԻՎԻՆ.*

ՍԲ ԽՉ ԽԱՒՍ ՂՈՒԶՈՒՄԻՆԻ...
ԿՈՂԱՅ ՄԱՐԱՆԻՆ
ԹՎ | ՌԾԵ

ՍԲ. ԽԱ[ՉՍ] [ԲԱՐԷ]ԽԱՒՍ ԴՈՒԶՈՒՄԻ[Ն]|
ԿՈՂԱՑ[ԿԻՑ] ՄԱՐԱՆԻՆ.|ԹՎ.։ՌԾԵ։(1606)։

**116.** *Բ. ՔԻՎԻՆ.*

\+ ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՍ
ՌՈՒՄ ԻՆ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ[Ւ]Ս ՌՈՒՄԻՆ։

Ծանոթ. *Անունն անծանոթ է, թերևս կրճատ է։*

**117.** *Գ. ՔԻՎԻՆ.*

ՍԲԽԱՉՍԲԽՒՍ ՃԱՀՇԷՆԻՆԻՐԿՈՂԱՑ
ԻՆ ՄԱՐԱՆԻՆ ՏՐԿԱՆ

ՍԲ ԽԱՉՍ ԲԱ[Ր]ԷԽԱ[Ւ]Ս ՃԱՀՇԷՆԻՆ,
ԻՐ ԿՈՂԱ[Կ]ՑԻՆ ՄԱՐԱՆԻՆ. ՏՐԿԱՆ։

Ծանոթ. *Վերջին բառը թերևս ՏԷՐԱԿԻՆ-տիրուհի վերծանվի։*

**118. ԽԱՉՔԱՐ**, *փոքր, քիվին և թևերի շուրջը. 4 տող.*

ԽՆԲԱԽՍ ՄԱՐԱՆԻ ՎԱՐԴՈՒՄԻ
ՀԱՏՈՒՐԻՆ
ԴԸ
Թ | Ռ

ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՄԱՐԱՆԻՆ, ՎԱՐԴՈՒՄԻ[Ն],| ՀԱՏՈՒՐԻՆ. ԹՎ. ։ՌՂԸ։
(1649)։

119. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, գտնվում է հյուսիս-արևմտյան ծայրում. երեսին 7 տող.

ԱՅՍԷ
ՀԱՆԳ
ԻՍՏԳ
ԻՐՔՈՐ
ԻՆ
ԹՎՌ
Ճ+

ԱՅՍ Է|ՀԱՆԳ|ԻՍՏ Դ|ԻՐՔՈՐ|ԻՆ|:
ԹՎ.: ՌՃ:(1651):

120. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, հյուսիսային երեսին հեծյալ և խնճույքի տեսարան շրջանակի վրա 2 տող.

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽԱՄԽԱՉԱՏՈՐԻՆ
ԹՎՌՃԴ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԽԱՉԱՏՈՒՐԻՆ.|
ԹՎ. :ՌՃԴ: (1655):

ՏԱՆՈՒՏԵՐ ԱԿՈԲԵՆՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

121. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, մեծ ու գեղաքանդակ, կանգնած երկու կառուց շինված մեկ պատվանդանի վրա. գտնվում են արևմտյան մասում.
Ա. ՔԻՎԻՆ, խորանի վերին մասում և հարավային կողին, 6 տող.

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽԱՒՍՔԱՍԲԱՐ
ԻՈՐԴԻԱՐԵՃԱՆԻՆ
ԹՎ ՌՃ
ՈՎԱՆԷՍ
ԿԱԶՄՈՂ
ՂԱՔԱՐԱՅ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՔԱՍԲԱՐ|Ի
ՈՐԴԻ ԱՐԵՒՃԱՆԻՆ|.
ԹՎ.: ՌՃ: (1651):|
ՈՎԱՆԷՍ| ԿԱԶՄՈՂ,| ՂԱՔԱՐԱՑ:

122. Բ. ՔԻՎԻՆ, խորանի մասերում և կողքին 6 տող.

ՍԲԽՉՍԲԱՐԷԽԱՒՍՏԱՆՈՒՏՐ
ՅԱԿՈԲԻՆ
ԹՎԿՌՃԲ ՅՈՎԱՆԷ
ՍԿԱԶՄ
ՈՂ
ԱՎԱՆԷՍ

ՍԲ. Խ,Ա,ՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՏԱՆՈՒՏ,Է,Ր
ՅԱԿՈԲԻՆ.| ԹՎ.Կ.:ՌՃԲ: (1653):|
ՅՈՎԱՆԷ|Ս ԿԱԶՄ|ՈՂ,|. ԱՎԱՆԷՍ:

Լուսանկ. 42

123. ԽԱՉՔԱՐ, մեծ ու գեղաքանդակ, նախորդների մոտ. քիվին և խորանի վերին մասերում.

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽԱՒՍԱԿՈԲԻՈՐԴԻ
ՏԱՆՈՒՏԷՐՍԱՐԳԻՍԻՆ




ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԱԿՈԲԻ ՈՐԴԻ| ՏԱՆՈՒՏ,Է,Ր
ՍԱՐԳԻՍԻՆ: |ԱՎ,ԱՆԷՍ ԿԱԶՄՈՂ,:

Մանոթ. Նույն պատվանդանի վրա կա մի դատարկ փոս ևս, խաչքարը կորած է, ժամանակակից է նախորդներին։

Լուսանկ. 43

ՏԱՆՈՒՏԵՐ ԲԻՐԱՊԵՆՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ.
ԳՏՆՎՈՒՄ Է ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ.

***124. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, մեծ, օրորոցաձև, հարավային երեսին 3 տող.*

ԹՌՃԺԸ
ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՍԼԱՆԻ
ՈԴՄԱՆՈՒՏԵՐ ԲԻՐԱՊԻՆ

ԹՎ. ։ՌՃԺԸ։ (1669)։| ԱՅՍ Է
ՀԱՆԳԻՍՏ ԱՍԼԱՆԻ| ՈՐԴԻ
ՏԱՆՈՒՏԷՐ ԲԻՐԱՊԻՆ։

Լուսանկ. 44

***125. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, փոքր, օրորոցաձև, հարավային երեսին 3 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏԱՂԱՅՄԱԼ
ԻՈՐԴԻԹԱՄՈՒԱՋԻՆԹՌ
ՃԼԷ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՂԱՅՄԱԼ|Ի ՈՐԴԻ
ԹԱՄՈՒԱՋԻՆ. ԹՎ.։ՌՃԼԷ։ (1688)։

***126. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, օրորոցաձև, տեղահան արված, նախորդների մոտ. 5 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏ
ԶԱՐԻՊԱՊԻՆՈՐԷ
..ԲԱԺԻՆ
ԱՂԱՅԱՂԱՄԱԼԻՆ
ԹՌՃՁԷ

ԱՅՍ Է ՀԱՐԳ[Ի]ՍՏ| ԶԱՐԻՊԱՊԻՆ, ՈՐ Է
ԲԱԺԻՆ|[Ա]ՂԱՅ ԱՂԱՄԱԼԻՆ|։
ԹՎ. ։ՌՃՁԷ։ (1738)։

***127. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, օրորոցաձև, նախորդների մոտ. հարավային երեսին 1 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏԱԼՍԱՆԻՆԹՎՌՃԾԴ

ԱՅՍ Է ՀՈՆԳԻՍՏ ԱԼՍԱՆԻՆ.
ԹՎ.։ ՌՃԾԴ։ (1705)։

Ծանոթ. *ԱԼՍԱՆ = ԱՍԼԱՆ։*

***128. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, տափակ, երեսին ցուլ. գտնվում է արևմտյան մասում. երեսին անարվեստ 2 տող.*

ԱՅՍԷՐԱՆԳԻՍՏ
ՏՐԴԱՎԻԹԻՆԹՎՌՃԽ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ՏՐ. ԴԱՎԻԹԻՆ.
ԹՎ. ։ՌՃԽ։(1691)։

ԱՍԱՊՈՎԵՆՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ. ԳՏՆՎՈՒՄ Է ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ.

***129. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, տափակ, երեսին 3 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏ
ՋԱՐԴՂԻՆ
ԹՎՌՃԽԵ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՋԱՐԹ[Ո]Ւ[Ղ]ԻՆ.
ԹՎ. ։ՌՃԽԵ։ (1696);

Ծանոթ. *Անձնանունը թերական։*

130. ՏԱՊԱՆԱՔԱՐ, *մեծ, տափակ, կից նախորդին հարավից, երեսին 2 տող.*

..ԲԽԱՆՍՏԱՊԱՆՍԲԱՐԷԽՈՍ
ԱՍԱՊՈՎԻՆ ԹՎՌԾՃԲ

ՍԲ. ԽԱՉՍ, ՏԱՊԱՆՍ ԲԱՐԷԽՈՍ|
ԱՍԱՊՈՎԻՆ. ԹՎ. :ՌՃԾԲ: (1703):

Ծանոթ. Ասապով *անունը* Աստուածապովի *ժողովրդական ձևն է։*

131. ԽԱՉՔԱՐ, *մեծ, կանգնած նախորդ տապանաքարի գլխին. քիվին և խորանի վերին մասերում.*

ՍԲԽԱՉՍԲԱՐԽՈՍԼՍԱՐԴՍՈՎԻՆ
ԹՎ ԿԱԿՃ ԴՐՃ
ԾԲ ՈՂ ԲԱԲ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐ[Է]ԽՈՍ ԱՍԱՊՈՎԻՆ.
ԹՎ. :ՌՃԾԲ: (1703); ԿԱԶՄՈՂ. ԲԱԲ;

Ծանոթ. *Անձնանունը վերականգնում ենք հետևելով նախորդին։ Բնագրում անորոշ է։*

ՏԱՆՈՒՏԵՐ ՍԱՐԳԻՍԵՆՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ. ԳՏՆՎՈՒՄ Է ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ
ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ, ԻՐԵՆՑ ԿՈՂՄԻՑ ՇԻՆՎԱԾ ՄԱՏՈՒՌԻ ՇՈՒՐՋԸ

132. ՏԱՊԱՆԱՔԱՐ, *գտնվում է մատուռից արևմուտք. վրան 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏ ԽԱ
ՍԱՐԳԻՍԻՆԹՎՌՃ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԱՐԳԻՍԻՆ.
ԹՎ. :ՌՃԽԱ: (1692):

133. ՄԱՏՈՒՌԻ *արևմտյան պատի հյուսիսային մասում, արտաքուստ, 8 տող.*

ԵՍՍԱՐԳԻՍԻԹՈ
ՌՄԻՐԶԱՏԻՈՐ
ԴԻԱԼԻՔՍԱՆՍ
ՇԻՆԵՑԻՍԲԵԿԵ
ՂԵՑԻՍԹՎՌՃ
ԿԳԷՐԵՍԱՏԻՍ
ԳԻՐԵՑԻԱՆԱՐ
ԺԱՆ

ԵՍ ՍԱՐԳԻՍԻ ԹՈ|Ռ, ՄԻՐԶԱՏԻ ՈՐ|ԴԻ ԱԼԻՔՍԱՆՍ
ՇԻՆԵՑԻ ՍԲ. ԵԿԵ|ՂԵՑԻՍ. ԹՎ. :ՌՃԿԳ: (1714) ԷՐ:
ԵՍ ԱՏԻՍ| ԳԻՐԵՑԻ ԱՆԱՐ|ԺԱՆ:

*Հրատ. Շահխաթունյանց, II, 239։ Սմբատյանց, 485։ (ԱՏԻՍ անունը՝ ՍԱՐԳԻՍ)։ Լալայան, VIII, 118 (նույնը)։ Ալիշան, 47։*

Լուսանկ. 45

134. ՄԱՏՈՒՌԻ *արևմտյան պատի հյուսիսային մասում, արտաքուստ, 5 տ.*

ԵՍԱԼԻՔՍԱՆՍ
ՈՐԵԿԵՂԵՑ
ԻՍՇԻՆԵՑԻԽՍՍ
ԴԱՌՆԴԺԱՐԺԱ
ՄԱՆԱԿԷՐ

ԵՍ ԱԼԻՔՍԱՆՍ|, ՈՐ ԵԿԵՂԵՑ|ԻՍ ՇԻՆԵՑԻ
Խ[Ի]ՍՏ|ԴԱՌՆ ԴԺԱՐ ԺԱՄԱՆԱԿ ԷՐ:

*Հրատ. Ալիշան, 47։ Լալայան, XVIII, 118։ Շահխաթունյանց, II 230։*

**135. ՏԱՊԱՆԱՔԱՐ**. *տափակ, մեծ, գտնվում է մատուռի արևմտյան մուտքի առաջ, արտաքուստ. վրան 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՄ
ԱԼԻՔՍԱՆԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ԱԼԻՔՍԱՆԻՆ:

**136. ԽԱՉՔԱՐ**, *մեծ, գեղաքանդակ, գտնվում է մատուռի մոտ. քիվին և խորանի շուրջը 5 տող.*

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽՕՍԷՍԱՐԳՍ
ՔՕՂՎԱՅԻՈՐԴԻՋԷՆԱԼԻՆ
ՆԵՐՍԷՍ ԿԱՅԶՄՈՂ
ԹՌ ՃՂ Գ

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ Է ՍԱՐԳԻՍ|
ՔՕՂՎԱՅԻ ՈՐԴԻ ՋԷՆԱԼԻՆ:
ՆԵՐՍԷՍ Կ|Ա|ՅԶՄ|Ո|Ղ.
Թվ. :ՌՃՂԳ: (1744):

Լուսանկ. 16

**137. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *տափակ, նախորդ խաչքարի դիմացը. վրան 4 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍ
ՍԱՐԳՍԻՈՐԴ
ԻՋԷՆԱԼԻՆ
ԹՌՃԿԸ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ|Տ ՍԱՐԳԻՍԻ ՈՐԴ|Ի
ՋԷՆԱԼԻՆ.|Թվ.:ՌՃԿԸ: (1719):

**138. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *օրորոցաձև. հարավային երեսին կենդանային ասպարան և վերին շրջանակին 1 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՕՎԱՆԷՍԻ ՈՐԴԻՆՈՋԱՐԻՆԹՌՃՁԷ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՕՎԱՆԷՍԻ ՈՐԴԻ ՆՈՋԱՐԻՆ. Թվ. :ՌՃՁԷ: (1738):

Լուսանկ. 47

**139. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *օրորոցաձև, նախորդին կից հարավից, հարավային և հյուսիսային երեսներին երեքական տող.*

ԱՅՍՀԱՆԳԻՍՏ
ՏԱՆՈՒՏԷՐՍԱՐՔԻՍԻ
ՈՐԴԻԳԱԼՈՒՍՏԻՆ ԹՌՃՂԹ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|Ի|ՍՏ| ՏԱՆՈՒՏԷՐ
ՍԱՐՔԻՍԻ| ՈՐԴԻ ԳԱԼՈՒՍՏԻՆ.
Թվ. :ՌՃՂԹ: (1750):|

ԵՍԻԳԱԼՈՒՍՏՆՆՈՐԱՏՈՒՍԻՆԻՇԱՏ
ՄՈՒՂՔՌԸՈՒՋԱԿԹՈՂԻՀԱՅՐԻՄ
ՍԱՐՔԻՍՄԻԱՆ·ԵՍԻԼԱՑՓՈՉ ԱՇԽ
ԱՐԷՍ

ԵՍ Ի ԳԱԼՈՒՍՏՆ ՆՈՐԱՏՈՒՍԻՆ, Ի
ՇԱՏ ՄՈՒՂՔ ՌԸՈՒՋԱԿ ԹՈՂԻ. ՀԱՅՐ
ԻՄ| ՍՍՐՔԻՍ ՄԻԱ|Ց|Ն. ԵՍ ԻԼԱՑ
ՓՈՉ (ՓՈՒՉ) ԱՇԽԱՐԷՍ:

***140. ԽԱՉՔԱՐ**, փոքր, կանգնած է գերեզմանատան հարավային եզրին. քիվին և թևերի արանքներում 4 տող.*

ԽՆԲԱՒԽՍՄԱՐԱՆԻՒՎԱՐԴՈՒՄԻ
ԾԱՏՈՒՐԻՆ
Ղ Ը
Թ Ռ

ԽՍՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՄԱՐԱՆԻՆ,
Վ.ԱՐԴՈՒՄԻ⌊Ն⌋,| ԾԱՏՈՒՐԻՆ|.
ԹՎ. :ՌՂԸ: (1649):

***141. ԽԱՉՔԱՐ**, մեծ, գեղաքանդակ, կանգնած եռաստիճան պատվանդանի վրա. գտնվում է հարավային եզրին. քիվին ուռուցիկ տառերով 2 տող.*

ԿԱՄՈՎԱՅԵՍԳԻՐԻԳՈՐԷՐԷՑՍԿՆԵՑԻԽԱ
ՀՍՄՈԳՈՅՓՐԿՈՒԹԻՄՈՅ.........

ԿԱՄՈՎ. ԱՅ. ԵՍ ԳԻՐԻԳՈՐ ԷՐԷՑՍ Կ⌊Ա⌋Ն⌊ԳՆ⌋ԵՑԻ
ԽԱ|ՉՍ ՀՈԳՒՈՅ ՓՐԿՈՒԹԻ ԻՄՈՅ . . .

***142. ԽԱՉՔԱՐ**, ղեղաքանդակ, կանգնած է նախորդից հյուսիս. քիվին և կողին 8 տող.*

ԽՆԲԾԷԽՆՍԱՒԱՆԷՍԻ ԻՍՏԱ ՆԻՆ | ԱՒ ԱՔՍ ՆՈՒ ՄԱՐ ԿԱՐԻՏ ԻՆ

ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԱԻԱՆԷՍԻՆ,
ԻՍՏԻԱՆԻՆ, ԱԻԱՔԻՆ, ՄԱՐԿԱ.
ՐԻՏԻՆ:

***143. ԽԱՉՔԱՐ**, գեղաքանդակ, կանգնած է նախորդի մոտ. քիվին վատ պահպանվածությամբ 1 տող.*

ՍԲ ԲՐԽԻԽԷՆՂԱՏՈՒՐԻՆ

ՍԲ. ⌊ԽԱՉՍ⌋ ԲԱՐԷԽԱԻՍ ԽԷՉԱՏՈՒՐԻՆ:

Ծանոթ. *Պատվանդանի վրա եղել են 3 խաչքարեր. երկուսը կորած են։*

***144. ԽԱՉՔԱՐ**, կանգնած պատվանդանի վրա, գերեզմանատան հարավ-արևմտյան եզրին. քիվին 1 տող.*

ՍԲԽԱՆՍԱՏԱՂԱ

ՍԲ. ԽԱՉՍ ⌊Ս⌋ԱՏԱՂԱՅ:

Ծանոթ. *Անձնանունը հնարավոր է նաև այլ կերպ վերծանել,* Սամաղայ, Ատաղայ *և այլն։*

***145. ԽԱՉՔԱՐԵՐ**, երկու հատ, մի պատվանդանի վրա, նախորդի մոտ. հյուսիսայինի քիվին 1 տող.*

ՍԲ ԽԱՆԹՍԻՆՓԿՍՀԿՍ

ՍԲ. ԽԱՉ⌊Ս⌋ ԹՈՐՈՍԻՆ ⌊Է⌋ ՓՐԿՈՒԹԻ. Հ⌊Ո⌋ԿՈ⌊ՑՍ⌋:

Ծանոթ. *Անձնանունը հնարավոր է* Թաթևոսին *վերծանել։*

*146. Հարավայինի քիվին 2 տող.*



ՍՐ. ԽԱՉՍ ԻՍԱՑԾԱՆԻՆ:

*147. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ մի պատվանդանի վրա, նախորդի մոտ, միայն հարավայինն ունի արձանագրություն քիվին, 1 տող.*

ԷՍԱՌԱՔԷԼԿՆՍԲԽԱՂ

ԷՍ ԱՌԱՔԷԼ Կ[ԱՆԿ]Ն[ԵՑԻ] ՍՐ. ԽԱՉ[Ս]:

*148. ԽԱՉՔԱՐ, սարին մասը կոտրված և կորած, շրջանակներին 2 տող.*



ԿԱՆԿՆԵՑԱԻ . . . |ՔԱՀԱՆԱՅԻ.
ՅԻՇԵՑԷՔ ՅԱՂԱԻԹՍ:

Ծանոթ, *Անձնանունը թերևս* Մարգար.

*149. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, հարավային երեսին խորաններ ու խաչեր, շրջանակներին 5 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ|Տ ՍՏԷՓԱՆՈՍԻՆ, ՈՐԴԻ
Է|ԴԱՍՈՒՄԻՆ.|ԹՎ. :ՌՃՀԴ: (1725):

Լուսանկ. 48

*150. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, արևելյան ճակատին 4 տող.*

ՄԽԱ···
ՄԱՐԷԽԱ·
ԲԱԲԱՃԱ
ՆԻՆ

ՍՐ. ԽԱՉՍ| ՄԱՐԷԽԱԻ| ԲԱԲԱՃԱՆԻՆ:

Ծանոթ. *Գրերն անկանոն Քիրամինն են։*

Լուսանկ. 49

*151. ԽԱՉՔԱՐ, փոքր, կիսովին խրված գետնի մեջ. գտնվում է նոր մասի հյուսիսային եզրին. քիվին 2 տող.*

ԿԱԿԵՑԻ ԽՆՍ ՎԱՐԴԻՀՈ
ԳՈՅՆ ԹՐՎԱՆԴԻՆ

ԿԱ[Ն]Կ[Ն]ԵՑԻ Խ[Ա]ՉՍ ՎԱՐԴԻ
ՀՈ|ԳՈՅՆ, ԹՐՎԱՆԴԻՆ:

*152. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, նախորդի մոտ, արևելյան ճակատին 3 տող.*

ԱԾՈՂ·
ԻԱՎԱ
ՔԻՆ

ԱԾ ՈՂ[ՈՐՄ]Ի| ԱՎԱ|ՔԻՆ:

***153. ԽԱՉՔԱՐ, փոքր, քիվին 1 տող.***

ԱԾՈՄԻ ՏԻՎԻՐՈ

ԱԾ. ՍՂՈՐՄԻ ՏԻԿՎԻՐՈ:

*Ծանոթ. Անձնանունը կասկածելի, թերևս Տիգրան.*

***154. ԽԱՉՔԱՐ, փոքր, կից նախորդին, քիվին 2 տող.***

ԵՍԱԿԲԿՆԽՆ
ՈՍԿԷԱՏԻՆ

ԵՍ ԱԿ⌊Ո⌋ՅԲ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ|
ՈՍԿ⌊Ե⌋ՅՀԱՏԻՆ:

***155. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նոր, արևելյան մասում. երեսին 5 տող.***

ԱՅՍԷՀԱԳՍ
ՇՂՎԱԿՑԻ
ԱՌԻԹԵՆԻ
ՈԴԱԿՕԲԻ
ԹՌՃԼԷ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ⌊Տ⌋| ՇՂՎԱԿՑԻ|
ԱՐՈՒԹԵՆԻ| ՈՐԴԻ ԱԿՕԲԻՆ:
ԹՎ. :ՌՃԼԷ: (1688):

***156. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախորդի մոտ, երեսին 4 տող.***

ԱՍԷՀԱԳՄ
ՏՐՍԻՄՈՆԻ
ՈԴԳԷՈՐԳԻ
ԹՌՃԼԷ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ՏՐ. ՍԻՄՈՆԻ|
ՈՐԴԻ ԳԷՈՐԳԻՆ|. ԹՎ. :ՌՃԼԷ: (1688):

***157. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախորդի մոտ, երեսին 2 տող.***

ԱՍԷՀԱՆԳԻՍՄ ԽԱ
ՍԱՐԳԻՍԻՆ ԹՎՌՃԽ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ՍԱՐԳԻՍԻՆ.
ԹՎ. :ՌՃԽԱ: (1692):

***158. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, գտնվում է նոր մասի հարավային եզրին. հարավային երեսին կենցաղային քանդակներ և 2 տող.***

ԱՅՍՀԱՆԳԻՍՄՕՎԱՆԷՍԻՈԴԱՂԱՄԱԼԻ
ԹՌՃՂԸՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՕՎԱՆԷՍԻ ՈՐԴԻ ԱՂԱՄԱԼԻՆ.|
ԹՎ.: ՌՃՂԸ:-ԻՆ (1749):

***159. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախորդի մոտ, երեսին 4 տող.***

ԱՍԷՀԱՆԳՍՄ
ՆԱԶԼՌԽԱՆԻ
ԱՂՋԻԿ ՋԱՍԻՆ
ԹՌՃՁԸ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ՆԱԶԼՈՒԽԱՆԻ|
ԱՂՋԻԿ ՋԱՍԻՆ.| ԹՎ.: ՌՃՁԸ: (1739):

*160. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախորդների մոտ, երեսին 5 տող.*

ԱՅՍԷՀԱՆ
ԳՍՄՔԱՐԻՄ·
Ի ՈՐԴ ԱԿՈԲ
ՃԱՆԻՆ
ԹՌՃՂԶ

ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՔԱՐԻՄ|Ի ՈՐԴԻ ԱԿՈԲ|ՃԱՆԻՆ|: Թ̄Վ. : ՌՃՂԶ :(1747):

*161. ԽԱՉՔԱՐ, փոքր, ընկած է նոր մասի հյուսիսային եզրին. երեսին 4 տող.*

ՍԲԽՆԲԱՐԽԱՍՂԱՀԱՆ
ԵՍՂ+Ո+ՂԻԶԹՍ
+
ՈՅԿՍՀԱԶՄ

|Խ[Ա]ՉՍ ԲՍՐ[Է]ԽԱ[Ի]Ս ՇԱՀԱՆ.| ԴՈՒՇՋ[ՈՒ]ԹՍ . . . ԿԱԶՄԵՑԻ:

*162. ԽԱՉՔԱՐ, փոքր, ընկած նախորդի մոտ, քիվին 1 տող.*

ՂԱՂԱՐԱԾՈՂՈՐ

ՂԱԶԱՐ[Ա] Ս̄Տ ՈՂՈՐ[ՄԻ]:

*163. ԽԱՉՔԱՐ, փոքր, ընկած նախորդների մոտ. քիվին 1 տող.*

ՄԽԱՆԱՄԻՐԽ

Ս̄Բ. ԽԱՉ[Ս] ԱՄԻՐԽ[Ա]ՆԻՆ[Ի]:

*164. ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, Քիրամի ոճի, օգտագործված է որպես գերեզմանաքար նոր մասի հյուսիսային եզրին. քիվին 1 տող.*

ԽԱՉՄԱՐԷԽԱՍՄԱԽԹՄԻՆ

ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ[Ի]Ս[Ի] ՄԱԽԹ[ՈՒ]ՄԻՆ:

*165. ԽԱՉՔԱՐ, նույն ոճի և նախորդի մոտ, օգտագործված որպես գերեզմանաքար. քիվին 1 տող.*

ՄԽԱՉՄԱՐԷԽԱՓԱՆՈՍՍԱ

Ս̄Բ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ[Ի]Ս[Ի] ՓԱՆՈՍ[Ս]Ա:

*166. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, դրված է նոր մասի արևելյան մասում, գերեզմանի վրա. քիվին 1 տող.*

ԽՍԲԱՐԷԽԱ̄Ս ՂԶԼԱՐԻՆ

ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ[Ի]Ս ԴԶԼԱՐԻՆ:

*167. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, նախորդի մոտ, նույնպես գերեզմանի վրա. վրան 3 տող.*

Մ̄ԽԱՉՄԱՐԷԽԱՐԱՔԱՐԻ ՏԻՆ
ՃՈՒ ԼՈՄ
Ի

Ժ̄Բ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ[Ի]Ս[Ի] ՄԱ[Ր]ՔԱՐԻՏԻՆ ԳՈՒԼՈ[Ի]ՄԻ[Ն]:

*Ծանոթ. Առաջին տողի վերջին վանկը խաչքարի հարավային կողին։*

168. *ԽԱՉՔԱՐ, փոքր, նախորդների մոտ, քիվին 1 տող.*

ԽԱՉԲԱՐԽԱՍԱԶԱ . . . ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ[Ւ]Ս ԱԶԻՆ:

169. *ԽԱՉՔԱՐ. քիվին մնացորդ, 1 տող.*

ՄԽԱՉՄԱՐԷԽԱԱԾԻՆ ԽԱՉՍ ԲԱՐ[Է]ԽԱ[Ւ]Ս ԱՏԱ. . . .

170. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ 'վրան 1 տող.*

ԵՍԾՈՒՂԻՑԻՄԻՐԱՏՈՒՍԿԱՆԵՑԽՉՍՆՐՍԷՍԻՆ

ԵՍ ԾՈՒՂ[Ա]ՅԻՑԻ ՏԻՐԱՏՈՒ[Ր]Ս ԿԱ[Ն]ԿՆԵՑԻ Խ[Ա]ՉՍ Ն[Ե]ՐՍԷՍԻՆ:

171. *ԽԱՉՔԱՐ, փոքր, քիվին, 1 տող.*

ՄԽՆՄԱՐՏԻՐՈՍ ՍԲ. Խ[Ա]Չ[Ս] ՄԱՐՏԻՐՈՍ[Ի]Ն:

172. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երեսին 4 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳՍՄ
ՍԱՌԻՄԻՆՈՐԷ
ԲԱԺԻՆՁԷՆԱԼ
ԻՆ ԹՌՃՁԶ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ|ՍԱՄԻԿԻՆ, ՈՐ Է|
ԲԱԺԻՆ ՁԷՆԱԼ|ԻՆ. ԹՎ.: ՌՃՁԶ: (1737):

Ծանոթ. Բաժին *այս դեպքում կնշանակի* ամուսին:

173. *ԽԱՉՔԱՐ, փոքր, Քիրամի ոճի, քիվին, 1 տող.*

ՄԽԱՉՄԲՐԷԽԳՈՒԼՎԱՐԴ ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽ[Ա]ԻՍ[,] ԳՈՒԼՎԱՐԴ[Ի]Ն:

174. *ԽԱՉՔԱՐ, փոքր, քիվին 1 տող.*

ՍԲ ԽԱՉ ՄԱՐՏ . . . . ՍԲ. ԽԱՉ[Ս] ՄԱՐՏԻՐՈՍԻՆ . . .

175. *ԽԱՉՔԱՐ, փոքր, քիվին, 1 տող.*

ՄԽԱՉՄԲԱՐԷԽԱԿՈՒԼՃԷԼ ԻՆ ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽ[Ա]ԻՍ[,] ԿՈՒԼՄԷԼԻՆ:

176. *ԽԱՉՔԱՐԻ ընկեր, Քիրամի ոճի, քիվին 1 տող.*

ՄԽԱՉՄԱՐԷԽԱՅԱԿՈԲԻՆ ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽ[Ա]ԻՍ[,] ՅԱԿՈԲԻՆ:

**177. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *տեղից շարժված, հարավում արհեստավոր և գործիքներ ու մեկ լուծով հերկող մաճկալ, մորակը ձեռքին. շրջանակներին 2 տող.*

ԽԱՅՆՍ ԳԻԲՔՈՐԻՆՔԻՐԱՄՍ ԽԱՆՍՇԻՆԵՑ

ԹՈ
ՌԼԱ

ԽԱՑՋՍ ԳԻՐՔՈՐԻՆ. ՔԻՐԱՄՍ ԽԱՉՍ ՇԻՆԵՑ[Ի]| Թու. ՌԼԱ: (1582):

Լուսանկ. 50

## ՄԱՏՈՒՌ

**178. ՄԱՏՈՒՌԻ** *հարավային պատի արևմտյան անկյունում մնացած հին երեսպատման քարի վրա, թերի արձանագրության 6 տողի սկզբի մասեր.*

| | |
|---|---|
| Ի ԹՎ.......... | Ի ԹՎ. . . . |
| ·ՅՍԾԱՌԱ:.... | ԵՍ ԾԱՌԱ [ԱՑ] . . . |
| ԵՐԵԼԻԳԵՂ.... | ԵՐԵԼ Ի ԳԵՂ[ՋՍ] |
| ԻՉԵԿԵՂԷՑԻՍՅ... | Ի ՋԵԿԵՂԷՑԻՍ Ց . . . |
| ՆՈՅԻՄՈՅՈՔ.... | ՆՈՑ ԻՄՈՑ ՈՔ . . . |
| ՄՐ ՔՍ: | ՏՐ. ՔՍ: |

Ծանոթ. *Վերաբերում է մատուռի շինության նախնական ժամանակներին, հավանաբար. XIII դարի։*

**179. ԽԱՉՔԱՐ,** *կանգնած է բակում, քիվին 2 տող.*

Ի ԹՎ ՋԾԴ ԿԱՆԵՑԱՒ ԽԱՉՍ ՓՐԿ
ՈՒԹԵՆ ՀՈԳՈՅ ԴԱՒԹԻՆ: ՈՐԴԻ ՄԸՐՈՒՆ

Ի ԹՎ. :ՋԾԴ: (1505) ԿԱՆ[Գ]ՆԵՑԱՒ ԽԱՉՍ ՓՐԿ|ՈՒԹԵ[Ա]Ն ՀՈԳՒՈՑ ԴԱՒԹԻՆ, ՈՐԴԻ ՄԸՐՈՒՆ:

**180. ԽԱՉՔԱՐ,** *խրված է գետնի մեջ, մատուռի արևմտյան մուտքի կողքին.*



Ի ԹՎ. :ՋԾԵ: (1506) ԵՍ ՇԱՏԻԲԷԿ[Է]Ս ԿԱՆԿՆԵՑՈՒՑԻ ԽԱՉՍ ՀՈԳՒՈՑ ԻՄՈՑ: Ե[Ի] . . .

Ծանոթ. *Արձանագրված մասը լրիվ բացեցինք, մնացած մասերը բոլորովին եղծված էին: Անունը կարելի է վերծանել նաև ՂԱՏԻԲԷԿ:*

**181. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *փոքր, օրորոցաձև, բակի մեջ. հարավային երեսին 1 տող.*

ԱՅՍԷ ՀԱՆԳԻՍՏ ԱՒԱՔԻՆ ԹՎ ՋՁԵ ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՒԱՔԻՆ. ԹՎ. :ՋՁԵ: (1536):

*182.* **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *փոքր, կից նախորդին, հարավային երեսին 3 տող.*

ԱՅՍԷՀԱՆ
ԳԻՍՏ
ՓԱՆՈ
ՍԻ

ԱՅՍ Է ՀԱ|[Ն]ԳԻՍՏ| ՓԱՆՈ|ՍԻ[Ն]:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդին և նույն գերդաստանի անդամ է։*

*183.* **ԽԱՉՔԱՐ**, *մեծ, գտնվում է բակի հյուսիս-արևմտյան անկյունում, քիվին 2 տող.*

ԵՍԱՆԱՐԺԱՆԱԹԱՆԷՍԷՐԵՅՍԿԱՆԿԵՑ
ԽՉԱՅՍՓՐԿՈՒԹԵՀԳՈՅԻՄՈՅԹՎՌԹ

ԵՍ ԱՆԱՐԺԱՆ ԱԹԱՆԷՍ ԷՐԵՑՍ ԿԱՆԿ[Ն]ԵՑ[Ի]
ԽԱՑՉՍ ՓՐԿՈՒԹԵ. ՀՈԳՈՑ ԻՄՈՑ. ԹՎ.: ՌԹ: (1560):

Ծանոթ. *Խաչ բառի մեջ ավելորդ Ծ-ն իր տեղում չի դրված։*

*Հրատ. Սմբատյանց, 485։ Ալիշան, XVIII, 120։*

*184.* **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *փոքր, օրորոցաձև, բակի արևելյան մասում, եղծված և անավարտ գրչությամբ.*

ՍԲԽԱՆԲԱՐԷԽԱՒՍՒԱՒՍԻՓՐԿՐԻՌԻ ԹՒՌԿԲԿԱԶՄՈՂԻԷԼ
ԿՐԻՆ ԱՍ
ՏՈՀ
. . . .
. . . .

ՍԲ. ԽԱՉ[Ս] ԲԱՐԷԽԱՒՍ . . . Ի ՓՐԿՈՒԹԻ. ԹՎ. :ՌԿԲ: (1613):
ԿԱԶՄՈՂ ԷԼ[Ի]ԱՍ . . .

*185.* **ԽԱՉՔԱՐ**, *կանգնած է բակի հյուսիս-արևմտյան մասում, քիվին և շրջանակների վերին մասերում.*

ՍԲԽԱՆՍԲԱԵԽԱՄԳԱՒՈՐՄԿՐՏՉԻՆ
ՀԱՒՐՆԻՄԸՍՏԷՓԱՆՈՍԻՆՍԱՀԻՆԱՆ




ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ Մ[Ե]Դ.ԱՒՈՐ ՄԿՐՏՉԻՆ,|
ՀԱՒՐՆ ՌՍՏԷՓԱՆՈՍԻՆ, ՍԱՀ[Ա]Կ[Ի]Ն . . . :

Ծանոթ. *Կանգնած է № 183-ի մոտ, հավանաբար նույն գերդաստանի անդամի համար և նույն ժամանակի,* XVI *դար։*

*186.* **ԽԱՉՔԱՐ**, *կանգնած է բակի արևմտյան մասում. քիվին 1 տող.*

ՄԽԱՉՍԲԱԷԽՍՄՐՄԹ
ԻՆ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱ[Ր]Է[Խ]Ա[Ւ]Ս ՏՐ. Մ[Ա]Թ[Ո]Ս[Ի]Ն.

Ծանոթ. XVI *դար։*

187. ԽԱՉՔԱՐ, կից նախորդին, քիվին, 1 տող.

ՍԲԽԱՉՍԲԱԽՆՄԱՐԻԻՆ — ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՄԱՐԻԱՆԻՆ.

Ծանոթ. XVI դար։

188. ԽԱՉՔԱՐ, կից նախորդին հարավից, քիվին 1 տող.

ՍԲԽՉԲԱԽՍԱԹԻԱՆ — ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԱԹԻԱՆ

Ծանոթ. XVI դար։

## ԿԱՄՈ ՔԱՂԱՔ (ՆԱԽԿԻՆՈՒՄ՝ ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ, ՀՆՈՒՄ՝ ԳԱՎԱՌ)

*Հայաստանի հնագույն բնակավայրերից է. քաղաքի մեջ ցցված քարաժայռի գլխին եղել է նախաուրարտական բերդշեն, որը գրավել է ուրարտական Ռուսա թագավորը և նոր կառուցումներ կատարել։ Այդ մասին գրված սեպագիր արձանագրությունը գտնվեց այստեղ՝ 1927 թ.։ Միջին դարերում այս բնակավայրը կոչվել է Գավառ, որի Գյավառ ժողովրդական անվանումը կենդանի է և այժմ։ Գավառ անվան ամենահին հիշատակությունը պահպանված է «Դարի գլուխ» կոչվող գերեզմանատան միջի խաչքարի արձանագրության մեջ, որը թվագրված է 1374 թ. Բնակավայրը քաղաք է դառնում Հին Բայազետից եկած գաղթականների վերաբնակվելուց հետո՝ 1830 թ., որոնք և ի հիշատակ իրենց նախկին բնակավայրի՝ կոչում են Նոր Բայազետ։*

*Արձանագրություն ունեցող հուշարձանները ցրված են քաղաքի տարբեր մասերում. ըստ հնության՝ հետևյալներն են.*

Ա. Զորամիջի գերեզմանատուն. *գտնվում է քաղաքի ամենահին, Բանդի թաղի եզրին, Ղշլաղ տանող խճուղու կողքին, գետի ձախ ափին։ Նախապես եղել է քաղաքից դուրս, իսկ այժմ արդեն շրջապատված է տներով։ Մեջտեղում կա հասարակ քարերով շինված մի ավերակ եկեղեցի, որը կոչվում է ս. Պողոս-Պետրոս, իսկ շուրջը գերեզմանատուն։ Գերեզմանատան հուշարձանները մեծ մասամբ տեղից շարժված են, մի մասն էլ հավաքված է եկեղեցու մեջ։ Այստեղ եղած 10 արձանագրությունից ամենահինը՝ 1000 թ. այժմ կորած է։*

Բ. Խաչերի թաղ. *քաղաքի հարավ-արևմտյան թաղամասն է. ըստ տեղեկությունների, ինչպես նաև անունն է ցույց տալիս, անցյալում այստեղ եղել են մի խումբ խաչքարեր, որոնցից միայն մեկը գտնվեց՝ մի տան բակում։ Այս մեկի թվագրությունն ապացուցում է, որ եղածները առնվազն XIII դարից են։*

Գ. «Դարի գլուխ». *այսպես է կոչվում դեպի քաղաքի կենտրոնն առաջացած քարափի վրայի հարթությունը, որի եռանկյունաձև մասում եղել է նախաուրարտական բերդշենը։ Հենց այդ հին բերդի տարածությունն էլ միջնադարում վեր է ածվել գերեզմանատան, ուր կա նաև հասարակ քարերով շինված մի մատուռ՝ ս. Ստեփաննոս անունով։ Գերեզմանատունն ընդարձակվելով դուրս է եկել բերդի սահմաններից և տարածվել դեպի արևելք։ Դրանք մի ժամանակ իրարից անջատված են եղել բերդի պարսպով, որը քանդվելով՝ այժմ երկու մասերը գրեթե միացել են։ Հնագույն, արևմտյան մասը եռանկյան սուր ծայրն է, ուր շարքով կանգնած են հիանալի քանդակներով խաչքարեր և մեծամեծ տապանաքարեր, որոնք պատկանում են տեղի տանուտերերին և նրանց առհմակիցներին։ Այստեղ առանձնակի է ս. Աստվածածնի մոտի խաչքարը Գավառի առվի և եկեղեցու շինության կարևոր արձանագրությամբ (№ 200) 1374 թվականով։ Մեր հավաքածուի մեջ այստեղից հավաքված են 55 արձանագրություններ։*

Դ. Ս. Կարապետ. *եկեղեցի, շինված է սրբատաշ քարերով, 1848 թ. Բանդի թաղի մեջ, բայց թե եկեղեցու և թե նրա բակի պարսպի մեջ ագուցված են հին խաչքարեր, որոնցից երկուսն ունեն արձանագրություն։*

Ե. Ս. Հովհաննես. *մատուռ գտնվում է քաղաքից Արծվաքար տանող ճանապարհի եզրին, երկուսի գրեթե մեջտեղում. շինված է փլված ժայռաբեկորներից կազմված նեղ անցքի մեջ,*



4—610